Խորենի ավագ եղբայրները լեյտենանտ Անդրանիկը և շարքային Ալբերտը հերոսաբար կռվել են հայրենական պատերազմում, երկուսն էլ զոհվել են անհավասար մարտերում՝ Կուբանի Կրիմսկի շրջանում և Բելոռուսիայի Վիտեբսկի մարզի Շապորա գյուղում: Մզի ճիրաններում տառապող հայրը Ավագը, ասել է կրտսեր որդուն.

– Ես գերեզմանում էլ հանգիստ չեմ մտա, եթե չիմանամ, թե որտեղ են հանգչում զավակներդ մարմինները:

Եվ Խորենը համառորեն սկսում է գրություններ ուղարկել զանազան արխիվներ, իմանում եղբայրների մասին, գնում եղբայրական գերեզմաններից երկու բուռ արյունոտ հող բերում դրպես սրբություն, որպես ջահել կյանքը գոհաբերած եղբայրներից հիշատակ: Այս մասին թերթերում տպագրած Խորենի հոդվածները անհնար է կարդալ առանց հուզվելու:

Խորենն ունի մի քանի հիշարժան կրթաշնչաններ, որոնցից մեկը ստացել է կոմերիտությունում ակտիվ աշխատանքի համար: Այն ստորագրել է ՄՍՌՄ կոմերիտության Կենտկոմի առաջին քարտուղար Եվգենի Տյաժելնիկովը:

Խորենը հպարտությամբ է խոսում փեսայի՝ Սմբատ Վարդիկյանի մասին: Լեռնային Օժբելդա գյուղում հասակ առած պատանին դպրոցն ավարտելուց հետո ուսանեց Օմսկի ավտոճանապարհային ինստիտուտում: Կոմերիտական Սմբատը իր հասակակիցների հետ մեկնեց Բայկալ-Ամուրյան մայրուղու շինարարություն: Քանի-քանի անգամ ինժեներ Սմբատ Վարդիկյանը անցել է դարի մայրուղով, գործնական ցուցումներ տվել շինարարներին, հետո նշանակվել գարաժի վարիչ, ստացել պատվոգրեր ու դրամական պարգևներ, արժանացել ԲՄՄ-ի կոմերիտության կոմիտեի դրոշի առջև լուսանկարվելու պատվին, ընդունվել կոմունիստական կուսակցության շարքերը: Անմոռանալի է Սմբատի կյանքում ԲՄՄ-ում տեղի ունեցած կոմերիտական հարսանիքը սիրած աղջկա բժշկուհի Մաթենիկ Եսայանի հետ: Թերթերում բազմաթիվ թղթակցություններ են տպագրվել ԲՄՄ-ի անձկներ շինարար Սմբատ Վարդիկյանի մասին, իսկ աները Խորեն Եսայանը, դրանք տեղավորել է իր տարեգրության մեջ:

Խորենի հարատվությունը նաև նրա երեք աղջիկներն են իրենց ընտանիքներով, հինգ թոռները և չորս ծոռները:

Սիրական ՍԵՎՈՒՆԻ
Լրագրող

ՍԼԲՈՍԱՅԻՆ

Խորեն Եսայանիս

Ոտիդ տակ որքան էլ փորեն,
Դու միշտ առույգ մասս, Խորեն,
Ճամփիդ առատ լինի ցորեն,
Հեռու փախչի ամեն բորեն:

Դու մարդ էիր սովետի,
Միշտ արժանի գովեստի,
Այժմ եկան նոր կարգեր,
Հետը բերին վա յ բարքեր:

Վրդովվեցիր դու շատ խիստ,
Դարձար համեստ մի տաքսիստ:

Խոտոր եղավ փառքիդ ճամփան,
Առաջ անցան մարդիկ անբան,
Չկա ոմանց երբեք ներում,
Դու սավառնիր քո եթերում:
23 դեկտեմբերի, 2014 թ.

ՓԱՌՔԻ ՄՈԼՈՒՅՔՈՎ

Հանճարների ճաճանչները
Շող են տվել դարերին,
Նրանց փառքի ճամփաները
Ձգվել կապույտ երկնքին:

Եվ աստղավառ փայլ են տվել
Ուղիներին մարդկության,
Պրպտումով ի հայտ բերել
Հրաշքները մեր տիտան:

Դու էլ անվերջ ջանք թափեցիր
Բարձունքների տիրանայ,
Գիշերները գիրք սերտեցիր,
Տենչում էիր մարդ դառնալ:

Համառորեն ուսում առար,
Որ չմասս սովերում,
Եվ լուսավոր դու մարդ դարձար
Բագափոստս ձեր գյուղում:

Եվ թրծվեցիր կյանքի բովում
Խորախորհուրդ գիտությամբ,
Լսողները քեզ են գովում,

Որ չես արել հուսախաբ:

Մարդկությունը դար ու դարեր
Չի մոռանա քեզ երբեք,
Կմաշվեն շատ լեռ ու քարեր,
Դու կմասս հար անբեկ:

Ջուրն ես խմել Տրուսկավեցի,
Ամրացել ես կաղնու պես,
Հմայքներին հուր կանացի
Դիմացել ես պարզերես:

Յոթ գլխանի դներն անգամ
Ուզեցել են քեզ գրկել,
Բայց դու թափով քո առնական
Կարողացար գլխատել:

Գլուխները մեկ-մեկ նետել
Կատուներին, շներին,
Արմատներով ծառեր փետել,
Ծաղիկ դնել ճյուղերին:

Դյուցագնական քո ուժի դեմ
Չի դիմանա ոչ մի լեռ,
Դուռն է բացել քանի եղեմ,
Որ գիրկն առնի քեզ անմեռ:

Հանճարների փառքի ճամփով
Դու էլ կերթաս դեպի վեր,
Ձգտուժներդ հզոր թափով
Քեզ տալիս են լայն թևեր:

Բաղ ու բախչան մանդարինի
Քեզ նպաստեց վերելքի,
Ի շնորհիվ գումարների
Հարթվեց ուղին քո փառքի:

Դու «Մոսկվիչով» դպրոց եկար՝
Հագած շքել մի կոստյում,
Բայց ոչ մեկի հագին չկար,
Բոլորն էին նախանձում:

Ասին՝ առանց կոստյում արի
Դու ամենքին հավասար,
Քո կոստյումը սիրտը կայրի
Չունեցողի աչքը չար:

– Նախանձում ես, – դու ասացիր, –

Քո դպրոցի ուսուցչին –
Դու էլ ինձ պես կհագնեիր,
Ունենայիր փող կարգին:

Ամեն անգամ կերուխումի
Թամադան ես դու լինում,
Եվ սեղանը մարդկանց քեֆի
Բլբուլ լեզվով քաղցրացնում:

Պոետների գրածներից
Քառյակներ ես մեջ բերում,
Եվ մտքերով շոնդալից
Լսողներին միշտ գերում:

Եվ ծափեր են հնչում զվարթ
Հարսանեկան հանդեսում,
Հարսն է նայում փեսին անթարթ,
Քեզ է, սակայն, նա տեսնում...

Դու էլ երբեք քեզ չես կորցնում,
Թիրախումս ես միշտ կանանց,
Նրանք թաքուն քեզ երագում
Այրվու մ, եփվու մ են անանց:

Ամեն անգամ կին տեսնելիս
Կաքավում է ձիվ վայրի,
Արյունդ բարկ եռք է տալիս,
Քիչ է մտում քեզ այրի:

Բայց դու հանկարծ թափ ես առնում,
Դառնում հեծյալ մի ասպետ,
Հըրիզները մով սավառնում,
Ո՛վ կմրցի էլ քեզ հետ:

Բախտի բան է կյանքը, բալամ,
Մինն ապրում է թևելով,
Մինն էլ օրն է մաշում հարամ,
Էշն է քշում հևալով:

Մուրբ ընտանիք դու ունեիր,
Եվ Թագուշն էր հարազատ,
Ափսոս, նրան դու շուտ կորցրիր,
Միրտդ լցվեց վիշտ ու դարդ:

Դու ուզեցիր արու գավակ,
Երեք աղջնակ ծնվեցին,

203

Հեռուստեցիբի հանց ավագակ,
Երբ որ տնից չվեցին:

Թոռ ու ծոռի տեր ես հիմա,
Փափկացել է սիրտդ բիրտ,
Նրանք խելոք և գործունյա,
Ժառանգներ են քեզ պես կիրթ:

Թոռ ու ծոռդ կարիք չունեն,
Միշտ հպարտ են պապիկով,
Բայց ես գիտեմ, նրանք կուզեն,
Որ չխաբես կապիկով:

Փառքի գերի հավերժ եղար,
Միշտ ձգտեցիբի գանձ ու գահ,
Առաջ անցան քանի տխմար,
Դու չդարձար նախագահ:

Բրիգադի ղեկը տվին,
Գործի անցար թև առած,
Արարեցիբ ամբողջ տարին
Տեղամասում քեզ տրված:

Քանի՜ հոգու տանը թմրած
Դու բուժեցիբ քո վարքով,
Ապա նրանք խելքի եկած
Կյանք վարեցին նոր բարքով:

Կոմունիզմի մատուցներում
Աշխատեցին թափ առած,
Եվ ստացան լուրջ հատուցում՝
Բերք ու բարիք ամբարած:

Քո ձգտումը վեհ է, բարի,
Լի է փառքի մոլուցքով,
Քանի սաղ ես, մի դադարի
Ելնել աստղոտ բարձունքով:

Դեռ էվերեստ կբարձրանաս
Ձնագնդի խաղալու,
Աստղերի մեջ երկնահաս
Մարսուհիներ գերելու:

Սևունին էլ, նոքար դառած,
Փառքիդ երգն է երգելու,
Վառ կերպարդ արեգնացած
Սերունդներին տանելու:

Իմաստուններ բազմաբեղուն,
Հին դարերից առ այսօր,
Մի կողմ թողած հանգիստ ու քուն,
Փառքն են գովում քո հզոր:

Ճառագում ես հորիզոնում՝
Մտվեր նետած արևին,
Նրանք անվերջ քեզ են տենչում,
Կարոտ են քո բարևին:

Քո արձանը պիտի դրվի
Կովկաս լեռան կատարին,
Որ քո ջանը մոտիկ լինի
Ամբողջ տարին արևին:

Որ ճառագես արև դառած
Բոլոր մարդկանց սրտերին,
Իսկ քո սիրտը կրակ արած,
Միշտ ջերմացնես ցրտերին:

Արծիվները թևատարած
Կգան ուսիդ կնստեն,
Ոչխարները իրենց որսած
Աչքիդ առաջ կխժռեն:

Դու քարակերտ բոյ-բուսաթով
Շուք ես տալու լեռներին,
Եվ վաստակած փառք ու պատվով

Ջարդարելու դարերին:

Ինչդ է պակաս Ալիևից,
Որ ցցվել է ամենուր,
Բրունգացած նայում վերից,
Ղարաբաղն է տենչում գուր:

Քո ուղին է հարթ ու պայծառ,
Ոգորումով ակնբախ,
Տիեզերքի դուռն անպատճառ
Բացելու ես դու անվախ:

Արժանի ես դու կրկնակի՝
Քո վաստակով համարձակ
Շարքում լինել գիտունների
Եվ ստանալ մրցանակ:

Քո ընթացքի ամեն պահին
Քամի լինի համընթաց,
Երբ բարձրանաս երկնի գահին,
Կանայք կգան գրկաբաց:

Սեր ու սիրով օրդ կանցնի
Երկնի անհուն կապույտում,
Կվրնջա թամբած քո ձին,
Որ սավառնես աստղերում:

Թեև տարիդ առաջ գնաց,
Նպատակներ ունես վառ,
Աչքդ, հաճախ, սիրուն կանանց,
Կուզես գրկել անպատճառ:

Ձի լավ գիտես բուրմունք տվող
Կյանքի ավիշ հուր կանանց,
Եվ գերվում ես դու անսքող
Հրապույրով միշտ նրանց:

Եվ գոչում ես դու բարձրաձայն՝
Միշտ առույգ ես և ջահել,
Ընկերներդ ծերուկ դարձան,
Դու պատրաստ ես դեռ սիրել:

Մի՛ շտապիր երբեք կյանքում
Անցնել գետեր ու ծովեր,
Շտապողն է հաճախ տնքում
Գործերի մեջ ուժից վեր:

Փառքը ինքը քո հետևից
Ջրնգալով դեռ կգա,

Դափնիների իր ճյուղերից
Մի ձոխ պսակ քեզ կտա:

Կբարձրանաս մտքով Պառնաս,
Ոչինչ չկա քեզ անհաս, –
Թե բանաստեղծ ցցուն դառնաս,
Գիրք կարդալով գորանաս:

Թև ու թիկունք լինել մեկին
Հոգուդ պարտքն է մշտական,
Անկեղծ կօզնի խելճ տկարին
Քեզ պես մարդը պատվական:

Ո՛րը ասեմ, ո՛րը՝ թողնեմ,
Խղճի տիպար, իմ Խորեն,
Ամեն անգամ սրտանց կուզեմ
Թշնամիքդ թող կորեն:

Տորիչելյան դատարկություն
Ուղեղներում կա ոմանց,
Զգոն եղիր, փաս արթուն,
Որ չհանդիպես դու նրանց:

Արժանիքդ գետնով չտաս,
Ձի դու վեհ ես, իմաստուն,
Քո բարձունքը, լավ իմանաս,
Չի հանդուրժում խտրություն:

Դեռ լեգենդներ պիտի հյուսեն
Բերնեբերան քո մասին,
Սերունդներին անվերջ ասեն,
Որ արև ես ու լուսին:

Ներող եղիր, հերոս արի,
Գովքդ չարի ըստ հարգի,
Մոլորվեցի քո կերպարի
Շողերի մեջ երևի...

Հումերոսը աշխարհ թող գա,
Թող գա նաև Ֆիրդուսին,
Աքիլլեսին քացին իր տա,
Բոնապարտին փառքը սին:

Քե՛զ կժամա փառքի դափնին,
Նրանց տրված շատ իզուր,
Գովքդ կանի քո Սևունին,
Երկնքի մեջ միշտ լազուր:

Հունվար, 2015 թ.
Սիրավան ՍԵՎՈՒՆԻ

ՆԵՆԳ ՈՐՈՇՈՒՄ

Որոշում կա, որ սրտից է բխում,
Որոշում էլ կա՝ փսիսել ես ուզում,
Նոր տարում նման որոշում արին,
Իրար խառնեցին չարն ու բարին:
Այդ որոշումը հենց որ ընդունվեց,
Մեր մարդկանց սիրտը, հոգին պղտորվեց:


Ուզում են փողը գանձել գրպանի,
Ոչ թե ըստ տանը ապրող շնչերի,
Այլ անպետք ընկած բազում մետրերի,
Որ տանտիրոջը նույնիսկ պետք էլ չի:
Քառուստերի համար գումար են գանձում,
Մի թե մետրերը թափոն են ծնում,
Ով հնարել է նման որոշում,
Իր որոշումից մի թե չի խմբում,
Որքան էլ նրա ականջը կանչի,
Որոշումը այս խելքի մոտիկ չի:

Պետք է ուշ դարձնել մարդկանց գանգատին,
Նենգ որոշումը սեղմել իր ճակտին:
Որոշում է այս, անշուշտ, արտառոց,
Պետք է տիրոջ հետ նետել աղբանոց:

6 փետրվարի 2015 թ.
Սիրավան ՍԵՎՈՒՆԻ
Լազարևսկ

ՀԱՅԵՐԵՆՈՎ ԳՐԵՐ ՄԱՇՏՈՑԻՑ 4 ՂԱՐ ԱՌԱՋ

Նախաքրիստոնեական շրջանում գոյություն ունեցած հայերեն գրի եւ գրականության մասին վկայություններ են պահպանվել անտիկ օտար հեղինակների երկերում: Հռչակավոր հույն փիլիսոփա եւ պատմագիր Մետրոդորոս Սկեփսիացին, ապրելով Պոնտոսում եւ Հայաստանում մինչեւ մ.թ.ա. 70 թ., գրել է Տիգրան II-ի պատմությունը եւ «Կենդանիների բանականությունը» փիլիսոփայական երկը: Այս վերջինը, ըստ Փիլոն Եբրայեցու (Ալեքսանդրացու) հաղորդման, որն ապրել է մ.թ.ա. I դ. վերջին քառորդից մինչեւ մ.թ. I դ. կեսը, թարգմանված է եղել հայերեն: Փիլոն Եբրայեցու նման քաջատեղյակ եւ բժախնդիր օտար հեղինակի այս համոզիչ հաղորդումը մեր թվարկության դարագլխին գոյություն ունեցած հայալեզու գրականության մասին, որ վկայակոչվում է առաջին անգամ, չի կարող չասանել նույնիսկ ամենակարծր հակաթեզերը:



վանում: Ի՞նչ լեզվով էր գրված այդ մատյանը – եթե Բարդաձանը, ինչպես վկայում է Խորենացին, այդ պատմությունը փոխադրել է ասորերենի եւ ապա հունարենի, նշանակում է մեհենական պատմության բնագիրը պետք է եղած լիներ հայերեն եւ գրված հայերեն գրերով:

Ուսումնասիրողներից ոմանք, ինչպես Ա. Աբրահամյանը, ենթադրում են, թե մատյանը գրված է եղել արամեական գրով, բայց այս կարծիքը հիմնավոր չէ: Ասորիներն իրենք իսկ արամեական գիր են գործածում հատկապես Եդեսիայի շրջանում: Նույնը վերաբերում է Տիր աստծո մեհյանին: Գերմանացի խոշոր հայագետ Յ. Մարկվարտը իր «Հայոց այբուբենի ծագումը եւ Մաշտոցի կենսագրությունը» ուսումնասիրության մեջ ժխտում է հայ մատենագրության գոյությունը մինչեւ V դարը հետեյալ փաստարկով. «Այս երկրի լեզվով չէր գրվել դեռ ոչ մի տող, որովհետեւ այն ժամանակվա հայտնի այբուբեններից եւ ոչ մեկը ի վիճակի չէր արտահայտելու հայերեն բազմաթիվ ու դժվարին հնչյունները»: Գերմանացի հայագետի այս ուշագրավ միտքը մեզ բերում է հակադարձ տրամաբանության եթե նախամաշտոցյան շրջանում եղել է հայ մատենագրություն, ապա դա կարող էր լինել միայն հայերեն այբուբենով, եւ ոչ թե արամեատառ կամ հունատառ: Եվ առհասարակ, միշտ բնական հարց է ծագում. հնարավոր է արդյոք, որ ժողովուրդն

ունենա գրի ու դպրության Տիր աստված, այդ Տիր աստծուն նվիրված դպրության մեհյան, բայց սեփական գիր եւ դպրություն չունենա: Օտար դպրության, օտարագիր եւ օտարալեզու մատենագրության համար հայրենի աստվածություն չի ստեղծվում:

XIII դարի հայ պատմիչ Վարդան Արեւելցին (Պատմություն տիեզերական, Մոսկվա 1861, էջ 70) վկայում է Լեւոն արքայի օրոք Կիլիկիայում հայտնաբերված դրամի մասին, որի վրա հայերեն լեզվով դրոշմված են եղել հեթանոս հայ թագավորների անուններ, որով եւ պատմիչը հաստատում է Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերեն գրերի գոյությունը. «Եւ զի լեալ է հայերէն գիր ի հնոյն – վկայեցաւ ի ժամանակսս Լեւոնի արքայի. զի գտաւ դրամ ի Կիլիկիա հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ թագաւորացն Հայկազանց»: Նման հարցադրումներն արդեն իսկ իր մեջ կրում է նախամաշտոցյան գրի զարգացումը, որն ունի կողմնակիցներ, բայցեւ ավելի մեծ թվով հակառակորդներ, որոնք կարծում են, թե նախամաշտոցյան գիրը կարող է նսեմացնել Մաշտոցի հանձարը: Կատարյալ թյուրիմացություն: Ահավասիկ մեր հին հեղինակներից զատեր եւ առաջին հերթին 5-րդ դարի ներկայացուցիչները սկսած Սահակ Պարթեւից եւ Մեսրոպ Մաշտոցից, նրանց աշակերտներ Կորյունը, Դավիթ Անհաղթ փիլիսոփան եւ Մովսէս Խորենացին, ապա եւ Ղազար Փարպեցին եւ այլք, ընդունում են հեթանոսության շրջանում հայոց դրությունների գոյությունը. հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում իմ գեկուցման մեջ ես ցույց տվեցի, որ ինքը Մաշտոցը, երկար ժամանակ Եդեսիայում եւ Ասորիքում դպրության հեթանոս ճարտարների մոտ որոնել է հայոց հին գրի ամբողջական այբուբենը: Կերը իմ հիշատակած Փիլոն Եբրայեցին իր ժամանակի ճանաչված մտածողներից մեկը, որին էնգելսը քրիստոնեության հայր է անվանում, իր եզակի վկայությամբ գալիս է հաստատելու հայալեզու գրականության իրողությունը դեռեւս մեր թվարկության սկզբին Մեսրոպ Մաշտոցից 4 դար առաջ:

*Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր*

Հեռավոր այմարները խոսում են մեր մայրենիով

Պարզվում է, որ Կենտրոնական Ամերիկայում՝ Տիտիկակա լճի ավազանում, ապրում է մի ժողովուրդ՝ այմարա, որը լեզվական կապ ունի հայերի հետ: Նա գործածում է բազմաթիվ բառեր, որ հայերենի փոխառություններ են: Այս բացահայտման հեղինակը բանասիրական գիտությունների թեկնածու Մերի Մարգայանն է: Նա ռուսական բանասիրության մասնագետ է, թարգմանություններ է արել ռադիոֆիզիկայի, ճարտարապետության ոլորտներում, հայերեն է թարգմանել ակադեմիկոս Պարիս Շեքունու «Հայերը եւ հնագույն Հայաստանը» գիրքը: 2011 թ. նրա թարգմանությամբ տպագրվեց Անաստասիա Յվետսեայի «Ռոզակյան գանգախարություն վարպետը. սաք հանձարի մասին» գիրքը՝ հայագրի երաժիշտ Կոնստանտին Մարաջեւի մասին, որը մեկ օկ-



տավայում լսում էր 1701 հնչյուն այն դեպքում, երբ սովորական մարդն ի վիճակի է լսել ընդամենը 23-ը: Մերի Մարգայանի հետ գրույցը այմարա ժողովրդին անչլով ուշագրավ բացահայտումների մասին է:

– Միշտ մտածում էի, թե ի՞նչ է նշանակում

«Մասուն» բառը, ինչու՞ Աճառյանի կամ մեկ այլ բառարանում դրա ստուգաբանությունը չկա, – իր գրույցն այսպես սկսեց իմ գրուցակիցը: – Մենք ունենք Մասուն երկրի անուն, սարերի անուն եւ «անասան» բառը, ուրիշ ոչինչ: Որոշ գրքերից իմացա այմարա հին ժողովրդի մասին, որը, ըստ ուսումնասիրողների, աշխարհի ամենահին լեզուներից մեկն ունի, իր մշակույթով ծաղկել է 15 հազար տարի առաջ, եւ ունեցել լեզուներ: Լեզուներ, որը կրկնվում է մի քանի ժողովուրդների մոտ: Պատմում են, որ ծովով իրենց մոտ եկան սպիտակամորթ, գանգրաիներ, շիկահեր, կապտաչա մարդիկ, որոնք համարվել են իրենց աստվածները, որովհետեւ գալով այստեղ՝ իրենց սովորեցրել

«Եվրատեսիլ-2015» երգի մրցույթում



Հայաստանն այս տարի նորովի կներկայանա «Եվրատեսիլ-2015» երգի մրցույթում: Հավատարիմ մնալով մրցույթի այս տարվա նշանաբանին, ոգեշնչվելով Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի խորհրդանիշ անմոռուկի գաղափարով, ինչպես նաև առաջնորդվելով բազմաթիվ սկիզբնախայերի ցանկությամբ, ովքեր միշտ եղել են եվրատեսիլյան մեր պատվիրակների կողքին, Հանրային հեռուստաընկերության ստեղծագործական խումբը որոշել է մրցույթին ներկայացնել նոր ձևաչափ:

Որոշվել է այս տարի համախմբել 1915 թ-ին աշխարհի 5 մայրցամաքներում (Եվրոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա) սփռված հայ ժողովրդի նոր սերնդին:

Իմրում ծագումով հայ 5 երգիչներ են, ովքեր գուցակցվում են անմոռուկի 5 թերթիկների հետ, իսկ Հայաստանից կմիանա նա մեկ մասնակից, ով կհամախմբի թերթիկները: Հատուկ մրցույթի համար ձևավորվելիք խումբը կկրի «Genealogy» անվանումը 6 արտիստ, 6 ձևակատագիր, 1 պատմություն:

Երգի վերնագիրն է «Don't deny» («Մի՛ ժխտիր»):

Եվրոպան ներկայացնող Եսայի Ալթունյանը ֆրանսիացի երգիչ-երգահան է: Երգել է «Pop Idol» խմբում, ապա որպես մենակատար իր իսկ գրած երգերով մասնակցել է բազմաթիվ հեռուստաշոունների, համագործակցել մատենարտ Միշել Լեգրանի հետ: Այժմ Եսային գործունեություն է ծավալում նաև ԱՄՆ-ում: Ինչ վերաբերում է Հայոց թեմային, ապա երգիչը, կարելի է ասել, մեծացել է Եղեռնի մասին պատմությունների ներքո: Նրա պայր՝ ջարդերից մազապուրծ եղած Նշանը, անգամ գիրք է գրել՝ նկարագրելով 1915-ին իր տեսած արհավիրքը: Ուստի պատահական չէ, որ վերջերս՝ ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Եսային նկարահանվեց «Je n'oublie pas» («Չեմ մոռանա») երգի տեսահոլովակը:

ԱՄՆ-ի ներկայացուցիչ Թամար Կապրելյանը ծնվել է Արիզոնա նահանգի Մոթոպել թաղաքում հայ-իրեա-բրիտանական ընտա-

նիքում: Ներկայումս բնակվում և ստեղծագործում է Նյու Յորքում: Նա իր կարիերան սկսել է 2008-ին՝ հաղթելով հայտնի «One Republic» խմբի կազմակերպած մրցույթում: 2010-ին թողարկել է իր հեղինակային երգերի ալբոմը՝ ստեղծագործելով փոփ ռոք ոճում: Եղեռնի մասին լսել է Արևմտյան Հայաստանի Խարբերո թաղաքում ծնված մորական պապիկից, ում ազգանունն էլ այժմ կրում է:

Աֆրիկան ներկայացնող Վահե Թիլբյանը ապրում և ստեղծագործում է Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայում: Նրա երաժշտությունը դժվար է մեկ բառով բնորոշել: ստեղծագործում է մի շարք ոճերում՝ ռոք, r&b, տեխնո և տարբեր ազգերի երաժշտություն... Առաջադրվել է մի քանի հեղինակավոր երաժշտական մրցանակների, 2012-ին թողարկել է «Mixology» ալբոմը, որը նրան մեծ հաջողություն բերեց միջազգային երգասպարեզում:

Ասիայի ներկայացուցիչ Սթեֆանի Թոփայանը (հայրը ամերիկահայ է, մայրը՝ ճապոնուհի) ծնվել է Լոս Անջելեսում, սակայն երգչուհու կարիերան սկսել է Ճապոնիայում՝ 13 տարեկանում: Համագործակցելով հայտնի ճապոնացի պրոդյուսեր Ջո

333

220 Հեռավոր այմարները խոսում են մեր մայրենիով

են ձուլագործության գաղտնիքները, նաև ճարտարապետական գաղտնիքներ, սովորեցրել են միակնությունը: Այդ ժամանակներում ձուլագործությունն առաջին հերթին Հայաստանում է եղել: Շուտերեքն գրություններում նաև հիշատակվում է անուն՝ Բանանեշ: Դժվար չէ կրահել, որ դա Հովհաննեսն է: Կարելի է ենթադրել, եթե՝ չպնդել, որ եկվորները հայեր են եղել: Նույն լեզվերում կա իրենց «Վիրակոչա» անունը, եթե շատ համարձակ լինենք, ապա կարող ենք ստուգաբանել որպես «ի վերուստ կոչված»: Գոյություն ունի Կալասասայա հրապարակ, որտեղ կանգնեցված է Վիրակոչայի բարձր արձանը՝ շուրջը քարեր: «Կալասասայա» բառը այմարերենից թարգմանվում է «կանգուն քարեր»: «Կալ»՝ հայերեն քարն է: «Բար» հայերեն արմատը մտել է աշխարհի բոլոր ժողովուրդների լեզուների մեջ: Ես հիշեցնեմ, որ «Մասունցի Դավիթ» էպոսում Մանասարի եւ Բաղդասարի կառուցած քաղաքն անվանակոչած ծերուկը բացականչեց՝ «սա հո սասունն է», այսինքն՝ պինդ, ամրակուր: «Կալասասայա» եւ «Մասուն» նույն նշանակությունն ունեն՝ անսասան, պինդ: Ես որոշեցի ուսումնասիրել այդ լեզուն, հասկանալ, թե մեր Մասունն ու Կալասասայան ինչպես համընկան: Գտանք 600 բառանոց այմարա-անգլերեն բառարան: Վեց ամիս ինքս ինձ թե տալով ու համոզելով, ինքս ինձ չհավատալով ուսումնասիրեցի: Իմ առաջ բացվեց մի զարմանահրաշ աշխարհ: 57 բառ՝ մոտ 10 տոկոսը, հայարմատ էին: Գիտության դոկտորներն ասացին, որ նույնիսկ երեք բառի նույնարմատ լինելը առիթ է մտահոգվելու այն մասին, որ կա լեզվական փոխառություն:

– Է՛լ որ բառերում համընկումներ կան:

– Օրինակ՝ «փիսի» նշանակում է կատու,

«փորակա»՝ փոր, «արմջանա»՝ մոռանալ, «կիտա»՝ ձկնկիթ, «ջուրա»՝ ջուր: 2004 թ. հռոչված պատրաստեցի եւ տարա ԳԱԱ «Լրաբերին»: Մեծ ոգևորությամբ ընդունեցին, եւ դրեցին հերթի: Երկու տարի մնաց հերթում, հետո էլ գլխավոր խմբագիրը կանչեց, թե՛ չենք տպելու, հոդվածը խիստ հայամետական է: Ասի՛ թուրքամետական և պիտի լիներ, որ տպագրեիք: Հոդվածը տպագրվեց այլ հանդեսներում:

– Իսկ այդ «ենթադրյալ» հայերը ծուլվել են տեղացիների՞ն, վերջիններիս սերունդները կենսաբանորեն նման չե՞ն հայերին:

– 2009 թ. Նիկարագուայից էլեկտրոնային փոստով նամակ եկավ: Այդ երկրի կենսաբանական գիտությունների դոկտոր, ազգությամբ ֆինն Սեպտիուսանենը գրում էր, որ հիացած է իմ հոդվածով, մի տասնհինգ միջազգային կոնֆերանսներում զեկուցել է այն: Հոդվածը հաստատել էր նրանց կենսաբանական տեսությունն այն մասին, որ որոշ հին ժողովուրդներ կարող են ունենալ ընդհանուր գեներ: Այմարների մեջ նրանք հայկական գեներ են գտել: Ես չեմ կարող դա ոչ պնդել, ոչ հաստատել, քանի-որ կենսաբան չեմ, կպնդեմ միայն լեզվական նմանությունը: Եվ այդ գիտնականը խնդրեց շարունակել հոդվածը: Ուղարկեց նոր՝ արդեն 3 հազար բառանոց բառարան, այմարա-իսպաներեն, եւ բնականաբար նոր բառեր ավելացան իմ հոդվածում:

– Հիմա ուսումնասիրությունը շարունակու՞մ եք:

– Արդեն հաստատվել են լեզվական նմանությունները: Ես ուրախ եմ, որ դա հայամետական աշխատանք է, ու երեւի այդ պատճառով էլ շատերի դուրը չի գալիս:

– Պարիս Հերոնու հայագիտական աշխատությունը, որ թարգմանել եք, երեւի նույնպես շատերի դուրը չէր գալիս:

– Նա աշխատությունը գրել է անգլերենով, որպեսզի աշխարհը կարդա, որ նախաքրիստոնեական Հայաստանն ունեցել է շատ բարձր մշակույթ, գիր, եւ որ սխալ է, թե Մաշտոցի ակնաչին Աստված փափսաց, ու նա էլ տաները շարեց, ու մենք ունեցանք գանձեր՝ շարականներ, որ աղոթքներ են, ու հանկարծ «ժլեց» Խորենացին, որն առաջին ժամանակագիրն է աշխարհում... Աղբյուրն հնարավոր չէ:

– Ինչու՞ է կեղծվում այդ հարցը:

– Մյն է՛լ մեր եկեղեցու կողմից: Որ հավատացյալները հանկարծ չկասկածեն, որ Քրիստոսը... Ոչ ոք ոչինչ չի կասկածի: Քրիստոսն էլ դեմ կլիներ ամեն տեսակ կեղծիքի: Ինչպե՞ս մենք կարող էինք միանգամից «խմանալ զբան հանձարոյ» եւ հանձարներ տալ աշխարհին: Մարդկության պատմությունն ընթանում է դանդաղ, եվոլյուցիոն ճանապարհով: Նույնն էլ՝ լեզվի զարգացումը: Հայոց լեզուն ունի 11 հազար բուն արմատ, որից 4 հազարը լրիվ, իսկ 5,5 հազարը մտիկ իդենտիկ են ասանկրիտի՝ հին հնդկերեն մեռած լեզվի հետ: Այսինքն նույնն են: Հայ հին գրաբարը եւ ասանկրիտը ունեն միարմատ չորս հազար բառ: Հնդկաստանում ասում են, որ ասանկրիտը հայերեն գրաբարի փոքր քույրն է: Հնդկական «Ռամայան» էպոսը ստեղծված է եղել ոչ թե Հնդկաստանում, այլ իրենց բուն հայրենիքում, եւ այդ էպոսում կա կարոտ, ցավով ու սիրով հիշում են իրենց հին երկիրը, որն ուներ «կապոյտ, ձյունապատ, բարձրաբերձ սարեր»: Ուղղակի կրկնում եմ շատ ուսումնասիրողների, որոնք պնդում են, թե քանի-որ Հայաստանը հանդիսանում է քաղաքակրթության օրրանը, հնդիկներն այստեղից են գնացել արեւելք:

Գագիկ ԱՐԱՆՅԱՆ

Յրանուշ ԶԱԿՈՒՅԱՆ. ԶԱՅՐԵՆԻՔԸ ՍԻՐՈՒՄ ԵՄ, ՈՐՈՎՅԵՏԵՎ ԱՅՆ ՔՈՆՆ Է, ԲԻՔԼԻԱԿԱՆ Է, ԶԱՎԵՐԺ Է...

ՀՀ սփյուռքի նախարար Յրանուշ ԶԱԿՈՒՅԱՆԻ հարցազրույցը «Ավանգարդում» Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով

Այս տխուր տարելիցը յուրատիպ ազդակ կարող է դառնալ (ու պետք է դառնա) աշխարհին ևս մեկ անգամ զգոնության կոչելու: Դարավոր վեր ցավը պատմության դատին հանձնելով շարունակելու ենք ամեն ամ խնկարկել անմեղ զոհերի հիշատակը, որի առջև պարտք ունենք արդար հատուցման պահանջատիրություն:

Արյունառուշտ մեր հարևանը անվրեպ գործեց տեղահանալով ու ցեղասպանելով Երկիր մոլորակում իր գոյությունը դարձրելով հաստատած, իր արարումով հռչակված մի ժողովրդի: Սակայն սխալվեց իր հաշվարկներում: Նախճիրից մագապուրծ հայերը «Անտունի» երգեցին, մորմոքացին «Քեյն լառ», բայց նաև «Ով մոռանա» երգվեցին: Այդ երդումն էլ ժառանգականության մոգությանը սերնդետերուղ փոխանցվեց: Այն օրերի կույր ու խուլ աշխարհի աչք ու ականջն էլ բացվեց: Մանավանդ անպատիժ մագաճ կամ լռելյայն համաձայնության արժանացած ցեղասպանությունը կրկնվեց հրեական Հոլոքոստի տեսքով: Ու էլի կրկնվելու է անպատեհիության դեպքում, զի չարիքը մեծանալու և կրկնելու «գեշ» հատկություն ունի:

Հայոց եղենագործության հաջորդ 100 տարիները կարող է ու պետք է դառնա հատուցման հարյուրամյակ: Դրա «հիմարկենք» այսօր է կատարվում՝ արդեն պետականություն կերտող ժողովրդի հայրենիքում: Եվ դրանում իր սկստիվ մասնակցությունն է ունենալու ՀՀ սփյուռքի նախարարությունը:

– Ցեղասպանությունը, Հայ դատը, մեր պահանջատիրությունը այն հենքն են, որի շուրջ միակամ են բոլոր հայերը՝ Հայաստանում և ի սփյուռս աշխարհի: Հայրենիքի հետ նրանց կապող օղակ է Սփյուռքի նախարարությունը, որի գործունեությունն այսօր սերտորեն աղերսվում է Հայոց Եղենի թեմաներին: Ի՞նչ ակնկալիքներ կարող է ունենալ մեր ժողովուրդը՝ պատմական դարձող 2015-ից.

– Ցեղասպանության 100-րդ տարելիցը նախևառաջ քաղաքական մեծ նշանակություն ունի: Հայ ժողովուրդը, ինչպես նաև միջազգային առաջադեմ հանրությունը պահանջում են, որ աշխարհի պետությունները, այդ թվում՝ Թուրքիան, ճանաչեն հայոց ցեղասպանությունը: Ճանաչելով ցեղասպանությունը նշանակում է, որ այդ երկիրը հարգում է մարդու իրավունքները, հարգում է ՄԱԿ-ի կողմից ընդունված կոնվենցիաները և միջազգային պայմանագրերը, և իր քաղաքական որոշումը ընդունելով, դատապարտելով Ցեղասպանությունն կոչվող ոճիրը նպատակ ունի, որպեսզի այլևս երբեք և որևէ երկրում չկրկնվի նման հրեշագործություն: Մա է ճանաչման հիմնական նպատակը, որին մենք նախանձախնայիք և հետևողական ենք, քանի որ որպես ազգ, ժողովուրդ այդպիսի ենք ցեղասպանության բոլոր սարսափները, կրել ենք այդ անչափելի հանցագործության հետևանքները: Հետևաբար ուրիշ ո՛վ, եթե ոչ Ցեղասպանությունից վերապրած ժողովուրդը պետք է պայքարի նմանատիպ հանցագործությունն աշխարհի որևէ անկյունում այլևս չկրկնվելու համար: Պատահական է, որ թե քաղաքական աշխարհը, թե



իրավաբաններն ու պատմաբանները, թե հետազոտողներն ու հոգեբանները շեշտում են, որ եթե ժամանակին ճանաչվեր և դատապարտվեր Հայոց ցեղասպանությունը, ապա հրեական Հոլոքոստ լինել չէր կարող: Մա, կարծում եմ՝ գլխավոր ուղերձն է մարդկությանը: Այս ուղերձը տեղ է գտել նաև վերջերս Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի կողմից ընդունված և Ցեղասպանության զոհերի հուշահամալիրում Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հրապարակված Ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում, որն արտահայտում է ոչ թե սոսկ Հայաստանի Հանրապետության կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարության, այլ համայն հայության առանցքային կառույցների և կազմակերպությունների ներկայացուցիչների միահամուռ տեսակետները: Մենք բոլորին ապացուցեցինք, որ չկա անհամաձայնություն Հայաստանի և Սփյուռքի միջև, չկա հակասություն համազգային խնդիրներում, որ ընդունված փաստաթուղթը համազգային, համահայկական փաստաթուղթ է: Այն դառնալու է ուղենիշ և երկու հայկական պետությունների, և հայկական բոլոր կազմակերպությունների, և համայն հայության համար:

Կարևոր ակնկալիք է նաև հայ ժողովրդի համար Թուրքիայում քաղաքացիական հասարակության ձևավորումը: Այսօր Թուրքիայում տեղի են ունենում գործընթացներ, որոնք խոսում են այդ պետության մեջ եղած կարծրատիպերի վերացման մասին: Մենք սկանսատեսն ենք այն ամենի, որ Թուրքիայում որոշակի ջրջանակների կողմից խոսվում է Ցեղասպանության մասին: Կարևոր առաջընթաց է այն, որ «Կանաչների» կուսակցությունը ընդունեց Հայոց ցեղասպանության փաստը, որ Օջալանը հայտնի նամակով խոսեց նաև Ցեղասպանության մասին: Մենք պետք է հավուր պատշաճի գնահատենք այն քուրդ պատգամավորին, ով քաղաքական ինքավստություն ունեցավ Թուրքիա Մեծ ժողովում ներկայացնել Ցեղասպանության ճանաչման մասին նախագիծը: Եթե դիտարկելու լինենք, թե այս ամենի հետևում ինչպիսի գործընթացներ են թաքնված, ապա ակնհայտ է, որ Թուրքիայում արդեն կա մտավորականների, քաղաքական գործիչների մի շերտ, ովքեր առերեսվել և ընդունում են իրենց իսկական, ոչ թե հորինված պատմությունը, ովքեր շարու-

նակում են պայքարել Թուրքիայում արդարության հաստատման համար: Չեմ կարող չհիշատակել այն հանգամանքը, որ Թուրքիայում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ազգային փոքրամասնությունները, որոնք դարձրեց ավելի լռելյայն համաձայնել են, թե իրենք բոլորը թուրք են, այսօր բացահայտորեն հայտարարում են իրենց ազգային արմատների, իրենց ոչ թուրք լինելու մասին, և ինքնության վերականգնման ճանապարհին ավելի շատ իսլամացած հայեր բացահայտում են իրենց հայկական արմատները: Այս իրողությանը կարելի է տալ գնահատական. Թուրքիայում ինքնության ճգնաժամ է: Իսլամացած հայերի հիմնախնդիրները և քաղաքական, և բարոյահոգեբանական ուսուցանալիքությունների նյութ են: ՀՀ սփյուռքի նախարարությունը գիտնականների հետ զբաղվում է այս խնդիրներով, իրականացնում է որոշակի ծրագրեր, ընդառաջ գնում այն հայերին, ովքեր ցանկություն ունեն վերադառնալ իրենց ինքնությանը, իրենց արմատներին, ուզում են սովորել մայրենի լեզուն: Արդեն իսկ ազգայնորեն կան, որ պատմական Տիգրանակերտում հայկական դպրոցներ են հիմնվելու: Մա ամենակարևոր իրողություններից են: Հարյուրավոր, եթե ոչ հազարավոր մարդիկ ցանկություն են հայտնել հայերեն սովորել: Մեր կողմից իրականացվել են կրթական, մշակութային, համայնքային, երիտասարդական և այլ բնույթի ձեռնարկներ, որոնք իրենց մեջ հայրենասիրական հզոր լիցք են պարունակում: Հայաստանում այսօր վերապատրաստվում են երկու երիտասարդ՝ Արևմտյան Հայաստանում հայերեն ուսուցանելու համար:

– Նշանավոր շատ մարդիկ, պետական այրեր և բարի կամք են դրսևորում՝ բարոյապետացվելով, հավանություն տալով ծրագրերին:

– Չեմ կարող շնորհակալ չլինել բոլոր այն հայտնի դեմքերին՝ քաղաքական-կրթական-մշակութային գործիչներին, ովքեր այսօր միավորվում են Ցեղասպանության դեմ շարժման մեջ: Չեմ կարող չասել շնորհակալություն այն մարդկանց, ովքեր «Ոչ ցեղասպանություն» ֆորումին պետք է մասնակցեն: Ինչպես էրախտապարտ չլինել Ֆրանսիայի նախագահին, ով առանց վարանելու հայտարարեց Մարիլի 24-ին Հայաստանում իր ստույգ ներկայության մասին և, նույնիսկ գտնելու է հնարավորություն՝ Փարիզում մասնակցելու համայնքային միջոցառումներին: Կամ Ուրուգվայի նախագահը, ում պաշտոնավարման ժամկետը թեև լրանում է, բայց պարտապես է իր բարձր հեղինակությունը և բոլոր հնարավորությունները ներդնել Ցեղասպանության 100-րդ տարելիցը հավուր պատշաճի իր երկրում հիշատակելու համար:

– Այն, ինչն արդարացիորեն Դուք գնահատում եք (մարդիկ իրավունք են ստացել իրենց ազգությունը չթաքցնել, անկաշկանդ խոսել հայերի կողորածի մասին և այլն)՝ հրաշալի է: Բայց

240

արդյո՞ք այդ ամենը ևս ի նպաստ Թուրքիայի հեղինակության չէ. որպեսզի մի ամբողջ ազգ տեղահանած ու յաջադաշտի մատնած ոճրագործը ճերմակ օձիքով ներկայանա աշխարհին՝ շարունակելով հերքել իր հանցանքը:

– Յավով եմ նշում, որ մի տարի առաջ Թուրքիայի բարձր ղեկավարությունը փորձում էր «ցավակցել» իր ժողովրդին սպարիլի 24-ի առթիվ, իսկ այս տարի այդ օրը փորձում է տոնի վերածել, հրավիրել տարբեր երկրների ղեկավարների: Կարծում եմ Հայաստանի՝ Նախագահի պատասխանն սամակը Թուրքիայի նախագահին լուրջ ուղերձ էր պարունակում նաև այլ երկրների ղեկավարների համար: Ընդունել Թուրքիայի նախագահի հրավերը նշանակում է տնտեսական, երկկողմանի շահերը վեր դասել համամարդկային արժեքներից, մարդկային իրավունքներից: Այս հրավերները ընդունելը կամ մերժելը կբացահայտեն աշխարհի իրական դեմքը: Յավով, Թուրքիան 100 տարի անց էլ չի փոխել իր քաղաքականությունը: Իմ վերը նշածը վերաբերում է ոչ թե թուրք հասարակությանը, այլ՝ իշխանությանը: Ինչքան հասունանա թուրքական հասարակությունը և կարողանա ընդվզել իր պետության վարած քաղաքականության դեմ, այնքան ավելի վատան կարող ենք ասել, որ մեր ջանքերն ի՞նչու չեն անցել: Եվ հետո, երբ ասում ենք, որ խնդիրը վերաբերում է Օսմանյան կայսրության և երիտթուրքերի իշխանությանը, ապա այսօրվա թուրքական իշխանությունը կանգ պետք է առնի և չշարունակի նրանց տարրի գործերը, քանզի կեղծելով, ժխտելով դատում են հանցակից այդ մեծ ողբերգությանը: Ուզում ենք ասել մի դարձիք հանցակից, քանի որ իրավահաջորդ լինելով և ձեր վրա վերցնելով անցյալի բեռը, դուք նմանվում եք նրանց:

– Ալինայտ Է, որ Թուրքիան ևս պակաս ջանարդյունք էր ի նախապատրաստվել իր ևսահրագործության տարեկիցին: Արել և անում է ամեն ինչ՝ մեր պահանջատիրության, պատմական իրողությունների «ձայնը» խլացնելու:

– Կարծում եմ Հայկական հարցը մեծ վնաս է պատճառում Թուրքիային, որովհետև տարեկան ևս միլիարդավոր դոլարներ է ծախսում պատմությունը կեղծելու, ապատեղեկատվություն տարածելու, լոբբիստական կառույցներ վարձելու, գանգվածային լրատվամիջոցներում իր օգտին հռոպվածներ տպագրելու համար: Այդ ինչպե՞ս է պատահում, որ նրանք հայկական գերեզմանոցը կամ հայության համայնքային կալվածքներ են վերադարձնում և կեղծ բարեպաշտ ձևաւում: Եթե չէին հափշտակել, ապա ինչն են հետ տալիս: Եթե ցեղասպանություն չէր եղել, ապա այդ դեպքում դրանք ինչու են իրենց սեփականությունը դարձել: Իրեն քաղաքական մեծ գործիչ համարող Էրդողանը պետք է հաշվի առնի, որ սա 1915 թվականը չէ, երբ կարելի էր գլխատել մտավորականներին, ազգի ոչնչացման ծրագիր մշակել: Այսօր մեր ժողովուրդը 21-րդ դար է հասել կիրթ, գրագետ, զարգացած, 10 միլիոն դարձած, աշխարհի 100 և ավելի երկրներում հիմնավորված և պահանջատեր. նա չի լռելու:

Եվ որպեսզի Թուրքիան չշարունակի սևացնել իր անունը, հեղինակությունը, իր հետագան ճիշտ կանխ կանգ առնի, օրինակ վերցնի Գերմանիայից, ճանաչի Յեղասպանությունը և վերջ դնի թշնամությանը, դադարեցնի պատմության կեղծա-

բարությունը: Պետք է Թուրքիան իր մեջ ուժ գտնի և ձեռքագատվի այն ամենից, ինչ արվել է մեկ դար առաջ:

– Մեր պահանջատիրության շրջանակներում արդյո՞ք ներառվում են տարածքային խնդիրներ: Արդյո՞ք ժամանակը չէ, որ նույն հետևողականությամբ աշխարհի տրամաբանության մեջ տեղավորենք Արևմտյան Հայաստան արտահայտությունը:

– 2011 թ. Սփյուռքի նախարարությունը հայ իրավաբանների համահայկական համաժողովը հրավիրել է ստեղծեց միջազգային ասպարեզում շատ հայտնի մասնագետների խումբ 22 սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ: Նպատակը իրավական թղթածրար ստեղծելն է: Մենք այն կարծիքին ենք, որ այսօր հրապարակի վրա կա 3 կարևորագույն խնդիր: Առաջինը ժամանակների իրավունքների վերականգնում. մարդկային, անհատական իրավունքներ: Ապա համայնքային իրավունքների վերականգնում. խոսքը մեր բոլոր համայնքների մասին է իրենց կալվածքներով, ունեցվածքով, եկեղեցիներով և այլն, հրապարակի վրա է այս ուղղությամբ Ամենայն շայնց կաթողիկոս Գարեգին Բ-ի և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ի հայտնի հայտարարությունը: Եվ հարցերի 3-րդ խումբը համազգային խնդիրն է: Համազգային խնդիրները իրավական հարթության վրա ուսումնասիրելով ի նչ արդյունքի կհանգենք: Դրա համար մասնագետներ են աշխատում: Ես այն կարծիքին եմ, որ պետք չէ ավելորդ հայտարարություններ անել, որովհետև յուրաքանչյուրն այլ կերպ է պատկերացնում այդ պահանջատիրությունը: Այդ իսկ պատճառով պետք է խնդիրը թողնել միջազգային իրավունքի մասնագետներին: Ուրախ եմ, որ այս ուղղությամբ իրավական փաստաթղթերը և անառակելի հիմքերը ավելանում են: Ապրիլի 22-23-ին մենք «Ոչ ցեղասպանությանը» ֆորումի շրջանակներում գումարելու ենք իրավաբանների միջազգային հաջորդ համաժողովը: Այդ համաժողովում շարունակելու ենք քննարկել ունեցվածքի, գույքի և ֆասցած հիմնախնդիրները: Եվ երբ իրավական թղթածրարը վերջնական տեսքով պատրաստ կլինի, քաղաքական լուրջ քննարկումներ կձեռնարկվեն:


– Սևուշու՝ փոխհատուցման խնդիրը նույնպես չի կարող անտեսվել:

– Մինչև մենք Թուրքիայի քաղաքական օրակարգ չհասցնենք Յեղասպանության ճանաչման խնդիրը, փոխհատուցման մասին խոսելն անժամանակ է: Որոշ դեպքերում մենք պետք է հետևենք զարգացումներին և հետևողականորեն ազդենք այդ զարգացումների վրա արագացնելով դրանք, առաջ տանելով ճշմարտությունը: Համոզված եմ, որ հաջողելու ենք, որովհետև մեր պահանջն արդար է հենված միջազգային իրավունքի վրա: Բազմաթիվ երկրներ արդեն ճանաչել են շայնց Յեղասպանությունը այդ կերպ իրենց համախոհությունն արտահայտելով: Դրա արդյունքում Թուրքիան հասկանում է, որ ինքը մենակ խաղալ չի կարող: Եվ եթե ֆասցյալ հզոր տերությունները ճանաչեն, դա իրական ճնշում կլինի, և Թուրքիան այլևս անելիք չի ունենա:

– Ի՞նչ եք կարծում, օրավոր պառակտվող մեր ժողովրդի համախմբման ազդակ կդառնա՞՞ ողբերգչույն այս տարին:

– Ես այն կարծիքին եմ, որ յուրաքանչյուր հայ, մասնավորապես այս պատասխանատու հանգրվանում, պետք է վեր կանգնի բոլոր տեսակի հակամարտություններից, պառակտումներից, խժժություններից, խմբային ու անձնական անբիցիաներից և գիտակցի, որ կա համահայկական ցավ, համազգային դատ, որին պետք է հետամուտ լինենք ազգովի: Մինչև այսօր ցանկացած իրական թե՛ շինծու ձեռնարկ, որը մեր քաղաքական կացության, սահմանների անհանգստությանն է բերում՝ անընդունելի է: Թուրքիայի նվիրական ցանկությունն է սեպ խրել մեր միասնության թիկունքին, անդունդ առաջացնել Հայաստանի և Սփյուռքի միջև «Բաժանիր, որ տիրես» սկզբունքով: Հայրտությանը, ուրախությամբ հայտնում եմ, որ դա Թուրքիային չի հաջողվի: Մենք պետք է որ պատմությունից դատեր քաղենք, ժամանակն է միավորվելու, Հայաստանը հզորացնելու, Արցախն անվտանգ, մեր սահմաններն անաղի դարձնելու: Պիտի կտրենք որոշ կարծատիպեր: Հայրենիքը չեն սիրում այն պատճառով, որ այն չեն է (ինչպես մորը չեն սիրում, որ նա հարուստ է). հայրենիքը սիրում են, որովհետև այն քոնն է, բիրիական է, հավերժ է...

ՍԱՐԱՑԵԼ Է ԲԱՍԿԵՏՈՒԿ ՐԱՅԱԶԳԻ ՐԱՅՏՆԻ ՍԱՐԶԻՉ ԶԵՐԻ ԹԱՐԻԱԼՅԱԼԸ



«Ես սիրում եմ հայկական ամեն ինչ: Պաշտում եմ մեր ազգային կենդանությունը: Ես մեծացել եմ հայկական խոհանոցով: Նախկինում ամեն օր կարող էի խաղողի տերևով տուրմա ուտել: Իսկ գառի մսից խորովածը ուղղակի հրաշք է: Բայց հիմա բժիշկներն ինձ արգելում են ճարպոտ ուտելիքներ ուտել:»

Զերի ԹԱՐԻԱԼՅԱԼ

84 տարեկան հասակում մահացել է բասկետբոլի հայտնի մարզիչ Զերի Թարիսյանը: Այս մասին Թվիթերի իր միկրոբլոգում հայտնել է Թարիսյանի որդին՝ Դենի Թարիսյանը:

Մարզչական կարիերան սկսել է Կալիֆորնիայի բասկետբոլային դպրոցում 1956 թվականին: 1959-1961 թվականներին Կալիֆորնիայի Լանքաստեր քաղաքում մարզել է Antelope Valley Joint Union High School թիմը, այնուհետև 1961-1966 թվականներին Ռիվերսայդի, իսկ 1966-1968 թվականներին Փասադենայի քոլեջների թիմերը: Հաջողությունները Թարիսյանին հայտնի դարձրին, և նա կնքեց իր առաջին պայմանագիրը բասկետբոլի առաջին լիգայի Shark թիմի հետ:



Լալա Մինասեան-Միսկարյան

Հայոց ճակատագիրը՝ տարաբնույթ հանգամանքների բերումով, մեր ազգակիցներին տարածել է ի սփյուռս ողջ աշխարհի: Սփյուռքում հայ մնալը չափազանց դժվարին գործ է, և իրավամբ դրա համար հերոսական ճիգեր են պահանջվում:

Մեր ազգակիցներից մեկն է Լալա Մինասյան-Միսկարյանը: Ծնվել է Լոռվա Արծիս գյուղում՝ ուսուցչի ընտանիքում: Գյուղի դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանում: Ամուսնացել և տեղափոխվել է մշտական բնակության Սիրիայի Հալեպ քաղաք: Ապրելով հեռավոր Սիրիայում, նրա հաղթաթուղթը եղել է հայ բառ ու բանի արարչությունը և հայոց գիրն է մնացել ապավենը՝ օտար շրջապատում պահպանելու ազգային ինքնագիտակցությունը: Նա մի քանի գրքի հեղինակ է: Նրա հոդվածները տպագրվել են բազմաթիվ հանդեսներում: Նա ականատեսն է ու պատմիչը այն ահավոր իրադարձությունների, որ տեղի են ունենում մեր օրերում Սիրիայում:

Հայ ժողովրդի համար ժամանակի մեծ խնդիր է Սիրիայի հայության այդ բեկորներին փրկելը, նրանց հայրենիքի հետ կապելն ու ներգրավելը՝ հայրենասիրության նվիրական գործում:

Այս տեսակետից Լալա Միսկարյանի հոդվածները միաժամանակ և ուսուցողական են և դաստիարակչական՝ ունենալով մեծ նշանակություն Սիրիա-Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունում: Ինքն իսկ կանխորոշելով իր տեղը սիրիահայ մշակութային կյանքում, նա կարողանում է պահպանել իր Հայի տեսակի ինտելեկտը, չզավաճանելով իր Ցեղի հոգուն:

Կարեն ՄՂՄՅԱՆ

ՏՈԿԱ՛, ՍՈՒՐԻԱ...

Դուն՝ առաջին մարդուն խանձարուր եղած ստեղծարար հող, Դուն՝ մարդկութեան լոյսի հնագույն ակունք, Հազարամեայ ճանապարհիդ փորձութիւններն իմաստնացած ազնուազարմ Տիկին:

Տոկա՛, թեև գիշակեր ազռաներ կը թռչին հնագոյն փառքեր անթեղած անապատներուդ ու նոր խոստումով ծաղկող բարեբեր դաշտերուդ վրայէն,

Թեև անարառու յելուզակները, հրեշտակներու դիմակներ հազուած՝ իրենց ծարաւը քու արիւնովդ կը յագեցնեն,

Թեև խաղաղութեան ու բարիքի խորհրդանիշ՝ մայրացած ձիթաստաններդ ոսկի ձիթախլի տեղ որդիներուդ արիւնը կը հոսի,

Թեև «եղբայրներդ» Կայէնի փառքը գերադասեցին ու Յուդայի երեսուն արծաթը, քանզի յուդայածին էին,

Թեև բուերը կը վայեն ու կ'անհամբերեն մօտալուտ վախճանդ գուժել խուլ ու կոյր աշխարհին,

Թեև որդիներուդ շարքերուն մէջ երկպառակութեան գայթակղիչ հունտեր կը ցանուին,

Թեև տակաւին իմաստութեանդ կաթը չծծած՝ անոնցմէ ոմանք պատիր խոստումներով կուրցած՝ վայրագ հովերէ կը քշուին ու մայրական սիրտդ կ'արիւնեն:

Տոկա՛, Սուրիա, խորագետ Տիկին, Դուն գիտես, որ այս չարանենգ մորիկներն ալ պիտի անցնին ծովածուփ դաշտերուդ վրայէն ու պիտի երթան ծովէն անդին խեղդուելու իրենց իսկ չարութեան մէջ,

Դուն գիտես, որ խաւարի որդիները, խաչը իրենց պատուար շինած ու Փրկիչին գերեզմանը շահարկելով՝ յաճախ փորձած

են սեւով ծածկել արեւաշող դաշտերդ, բայց իրենք սուզած են իրենց խաւարին մէջ:

Դուն գիտես, թե եղէգները, թեև կը կորանան մորիկներուն առջեւ, սակայն հուսկ ապա կը կանգնին գեղուղէ՛լ՝ առաւել ամրացած ու տոկուն:

Դուն գիտես, թե թուխպերը որքան ալ որ կարկտահարեն, պիտի ելլէ՛ Արեւը ու նոր ծիլեր պիտի յորդին քու դաշտերուդ մէջ:

Տոկա՛, Սուրիա, Մա՛յր բարութեան, Շտկէ՛ որդեկորոյս մօր կորացող մէջքդ, քանզի ես եւս կեցած եմ ետիդ իբրեւ որդիական նեցուկ հաստատուն,

Դուն, որ բարիքներուդ դմները բացիր, երբ քեզի եկայ իբրեւ տափաստաններու գորշ գայլերէն բիւրախոց, հալածական ու բնաւեր հաւք,

Դուն, որ եղար հաստատուն հողը ոտքիս տակ, տուիր ինձի անաշակարկ ջերմութիւնը մայրական սիրտիդ ու ամրութիւնը եղբայրական բազուկիդ,

Դուն, որ քու արդար յարկիդ տակ լայնասրտօրէն հովանի եղար վտանգուած ինքնութիւնս պահպանելուն ու դարձար սիրելի՝ յափշտակուած սրբազան Հայրենիքիս հողին հանգոյն, Հիւանդ ու ժանտ այն ծեր գայլը, որ հայրենիքս յափշտակելով ամրացաւ, հիմա ալ ժանիքները բաց՝ զքեզ յօշոտողներու վոհմակին միացած՝ արիւնդ կը հեղէ, սակայն

Տոկա՛, սրբէ՛ արցունքդ ու ամրապնդուէ՛, գեղանի Սուրիա, Զանգի պիտի անճանայ ինչ որ ժամանակին է ու պիտի տեսէ՛ ինչ որ յաւերժին է: Պիտի շարունակեն լուրթ երկինքիդ տակ խաղաղ ցուլ ցորենի արտերդ ու յաւերժական բարութեամբ պիտի խական յղի ձիթաստաններդ...

250 ... ՀԱՅԱՉԳԻ ՀԱՅՏՆԻ ՍԱՐԶԻՉ ՁԵՐԻ ԹԱՐԽԱՆՅԱՆԸ

Մեկ տարվա ընթացքում Թարխանյանը նոր թիմ կառուցեց, որը մտավ առաջատարների առաջին եռյակ: 1977 թվականին Լոս Անջելես Լեյքերս ակումբի ղեկավարությունը Ջերիին պայմանագիր առաջարկեց, սակայն մարզիչը հրաժարվեց և շարունակեց մարզել նախկին թիմը:

1992 թվականին Թարխանյանն մուտք գործեց NBA՝ պայմանագիր կնքելով Ման Անտոնիո Սփրիտ թիմի հետ, որը 1995 և 1996 թվականներին դարձավ NBA չեմպիոն: 2002 թվականին 72 տարեկան հասակում Ջերին հեռացել է մեծ սպորտից:

Իր 34-ամյա մարզչական կարիերայի ընթացքում Ջերին հաղթել է 729 խաղում, որից 706-ը դիվիզիոնի մակարդակի: 2013 թվականին իր տեղն է զբաղեցրել ամերիկյան բասկետբոլի «Փառքի սրահ»-ում:

ՏՐՏՈՒՆԶ

Օրերս անպտուղ, տխուր, ծանձրալի, Ու գնում եմ ես ունայն տրտունջով Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի Գերեզմանների շարքերի միջով: Թաղել եմ նրանց: Տխուր է ճամփան: Եվ իմ հայրենի աշխարհում օտար, Օտար ու մենակ անցկորի նման, Որ ջունք ընկեր, ոչ տեղ ու դարար: Օտար են շուրջը ու չեն հասկանում Ոմանք քո վիշտը, ոմանք քո լեզուն, Անտարբեր գալիք երջանկի օրին, Զգիտեն նրա կարոտը անքուն... Զնչի՞ն մարդուկներ, լըբրեն հանգիստ

Անսիրտ, փոքրոգի, գծուծ ու կոպիտ. Մեռնում ես, մարում նրանց հայացքից Եվ հոգու ճգսում, և՛ սրտի ժայիտ: Էլ ո՞ւմ առաջին սիրտդ բաց անես, Ո՞ւմ համար երգես սրտալի երգեր, Ո՞ր չքին սիրես, կանաչ կմիտես, Էլ ինչպե՞ս ապրես անտեր, անընկեր... Եվ օրերս այսպես տխուր, ծանձրալի, Ու գնում եմ ես ունայն տրտունջով Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի Գերեզմանների շարքերի միջով:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մեր օրերում շատ են գրքերը, շատ են և գրողները: Բայց դժբախտաբար նրանցից շատերը գուրկ են և գեղարվեստական արժեքից, և մտքի զգացողությունից, և ...

Այս առումով Լիլիա Մաշինյան բանաստեղծուհին իսկական երևույթ է մեր արդի պոեզիայում: Մեր օրերում, մեր կողքին ապրող բանաստեղծուհի՝ ով իր պոեզիայով մտել է մեր գրականության մեջ, սիրով և ու դարձել է մեր հոգևոր աշխարհի մասնիկը:

Լուսավա ջընաղ բնաշխարհի (Շնող գյուղ) ծնունդ է Լիլիա Մաշինյանը: Եվ Լուսին դարձել է նրա ներշնչանքի աղբյուրը: Լիլիա Մաշինյանի պոեզիան ունի Լուսավա ծորերի խորությունը, Լուսավա սարերի վեհությունը, Լուսավա երկնքի մաքրությունը: Նրա պոեզիան խոհի ու զգացմունքի, զգացողության և հույզի, հոգու և

մտքի ներդաշնակություն է:

...Եվ միայն իրեն՝ բանաստեղծուհուն է հայտնի, թե ի՞նչ ցավ է կրծում իր սիրտը ամեն մի բանաստեղծություն երկնելիս, ի՞նչ վախով է նա այդ բանաստեղծությունները հանձնում ընթերցողի դատին...

Լիլիա Մաշինյանի բանաստեղծությունները գրավում են ընթերցողին իրենց պոետական հասունությամբ, ձևավորված աշխարհայացքով, ապրումների անկեղծությամբ: Նրա պոեզիան բաց խոստովանություն է, մի անսահման, չմարված կարոտ առ Հայրենիք և հայրենին, առ սերն ու մայրենին...

Կարեն ՄՂՂՅԱՆ

Չրաշքի խաբկանք

Քեզ ի՞նչ պատմեմ սահմաններից իմ հոգու, Երազներիս հայացքներից երկնաքեր, Տառապանքի քարտեզներում իմ ու քո Ինքս անգամ տեղս կարգին չգիտեմ, Քեզ ի՞նչ պատմեմ սահմաններից իմ հոգու... Որտեղ է եմ ես, ի՞նչ դասարկում, ի՞նչ հոծում... Ինչ նոր օր եմ մաքրագրում, ինչ՝ ջնջում, Երբ վրձնում եմ եկնաառաք թախիծներ, Երբ պոեզիաս արևներից եմ փնջում, Ու Մերը հենց գուցե սա էլ համարենք... Հին տարին էր երազի մեջ արթմանի... Մանսօրյա հրաշքների բարձի տակ Այս տարին էլ դասարկ մի տուփ կղնի, Չյուն կնատի լուսնի վրա շարունակ, Ու կարոտում նորից օրը կմթնի... Ու պոեզիան գուցե սա էլ համարենք, Երբ գիշերը թանաքագույն է դառնում, Ու բառեր են կաթում լուսնի աչքերից, Տառապանքով ձերմանկ թղթին համբանում... Ու Մերն էլ հենց տառապանքը անվանենք... Երբ խենթության դաշտից պոկված մի քամի Հավիում է մեզ անքնության մատներով, Եվ տխրության անմխիթար մի ժամի Մերը ծածուկ պոեզիային մատներով՝ Թողնում ենք, որ իր աշխարհները տանի... Չրաշքը հենց գուցե սա էլ համարենք...

ՁՍԵՆՈՎՅԻՆ ԷԼԵԳԻԱ

Արթնացա: Մաքու՛ր էր օրը, ու չկար ոչ տանջանք, ոչ թույն, Դյուրակյան հեքիաս էր փռել ցած իջնող սպիտակ մի ձյուն, Լոր սարքած շարոցի՝ նման ծառերից շիրա էր կաթում, Ամեն ինչ ձերմանկ էր պյուսօր, ու սակայն... ուր էիր դու... Եվ իջավ գիշերը հուշիկ, սպիտակ կ, շուշե՛, իւշա՛ն, Լույսերը չեմ անջատում, դեռ գուցե կգաս դու տուն, Կբերես ձյուններից խլած սպիտակ, իսկական շուշան, Որ ապրի գիշերս ցիրո ձյունապա ր գլխապտույտ...



ԳԻՇԵՐԱՅԻՆ ՈՒՊՍՈՂԻԱ

Չքնեցի այդ գիշեր: Վարագույրի ետևում Լուսնապույսի ծաղրանքը իմ աչքին էր հետևում: Գրում էի: Ու հատ-հատ տենդոտ-քնատ բառերում Մշուշվում էր հուշ առ հուշ ցնորքների իմ հեռուն: Դրսում ձմեռն էր ծաղկել, ցուրտն իմ ներսում էր մանում, Փայթիլներից ես այնպես նմա՛ն էի մանրանում... Խաբում էի ինքս ինձ, թե լուսնի պաղ աչքերում Այս ձյունամաղը նորից գարուններ է նկարում... Մինչ նույն ցավի խազգրով հերթական երգն էր գրվում, Չեղած տաքից խունացած՝ կորչում հոգնած թղթերում: Իմ քրքրված երազի ձերմանկ շորն էր Անճարում, Ոչ մի փրկող կարկատան՝ բառի դատարկ տաճարում... Ու ողջ գիշեր ես այսպես՝ փունջ ասեղով ինձ կարում, Քեզ թելահան Մեր էի նամակներում ծրարում...

ՀԱՅՐԵՆԻՔ՝ ԿԱՐՈՏԻ ՎԱՐԴ...

Հայրենիք, հար թերթվող գիրք, Մեանաչք կապույտի թարթ, Ճերմակ սար, ծովխոհուն միտք՝ Նոյալե վեհ ակնթարթ: Հեռու եմ... Լուրթ ջրերիդ Ակներն են իմ բիրբերում, Քո պանդուխտ որդուն ներքի, Գիրկ պահիր կարոտներում... Կապուտաչ, ձերմակահոն, Հայրենիք՝ հարավի վարդ, Քարեղեն իմ երգեհոն, Փիրուզակ իմ կրծքագարդ:

Հայաստանում

Ես էլ ո՞նց գնամ էս լեռներից, Կանաչ կարոտիս ինչպե՛ս գզվեմ, Ի՛նչ բառեր պոկեմ էս ջրերից, Էս տաք գույներով ի՛նչ երգ գրեմ... Հայրենք նորից թե՛ և առել Աղափսի դարձած թառե՛լ սրտիս, Ես կարոտաբաղձ հավք եմ դառել, Երնելի երգը առած կտցիս...

Ասացի, – Մե՛ր, Ասիք, – չկա՛մ, Ի՛նչն է՛ փում՝ Ես փսամ, Ասացի, – Մա՛հ, Ասիք, – կգամ, Հենց որ օրը Իմանամ, Ասացի, – Ցա՛վ, Ասիք, – Ես կամ Միրո, – Մահվան Արանքում... Ասացի, – Ե՛րգ... Ասիք, – Ես եմ Էդ ցավերը Անոքում...

Լիլիա ՄԱՇԻՆՅԱՆ

«ՇՆԵՐԸ»

Ես գիտեմ, թե ովքեր են տերերը, Ում ձեռքից են ուտում էս շները, Ես գիտեմ...

Ու թե՛ն միշտ էլ կուշտ են տերերը, Բայց սովից կատաղած են շները, Եվ հիմա...

Հենց էնպես չեն հաչում էս շները, Ուշացրել են մի քիչ նրանց կերը. Ուշացրել...

Կերակրեք, չէ՛ որ դուք եք տերերը, Որ հանկարծ մեզ չուտեն էս շները, Կերակրեք...

Վայելեք ձեր համեղ պատանները, Մնացրող ուտեն թող շները, Որ լռեն...


Թե չէ վախն այցելում է գիշերը, Երբ սովից կատաղած են շները, Զգուշացեք...

Փակեցեք շատ ամուր ձեր դռները, Փողոցում թող փսան պոետները, Եվ մարդիկ, Ում համար միևնույնն են տերերը, Եվ հատուկ կատաղացրած շները, Միևնույն...

Ռուբեն ՀԱԿՎԵՐԴՅԱՆ

ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ ԽՈՍՔԸ ԿՈՐՑՐԵԼ Է ԻՐ ԱՐԺԵՔՆ ՈՒ ԳԻՆԸ

հարցազրույց Արգամ Այվազյանի հետ իր նոր և տպագիր աշխատությունների մասին



Ճարտարապետության և մշակույթի պատմաբան, արվեստաբան Արգամ Այվազյանը ծնվել է 1947 թ-ին Նախիջևանի Արինջ (այժմ Շահբուզի շրջանի Արինջ) գյուղում: Ամբողջ կյանքը զբաղվում է Նախիջևանի տարածքի պատմությունով, մշակույթով. նա իր կյանքի 50 տարին նվիրել է այդ երկրամասի բազմաթիվ հուշարձանների և սրբավայրերի ուսումնասիրությանը: Ավելի քան 200 աշխատության հեղինակ է (որոնցից 40-ը հրատարակված է առանձին գրքերով), իսկ 7-8-ը շուտով լույս կտեսնեն: Արգամ Այվազյանը նաև Նախիջևանի մասին ֆիլմի, կոնֆերանսների, քննարկումների, ցուցահանդեսների հեղինակ է: Նախիջևանի հուշարձանների պահպանման, ճանաչման, ուսումնասիրման իր արդյունավետ աշխատանքի համար Արգամ Այվազյանը պարգևատրվել է ՀՀ Ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ», ՀՀ վարչապետի մեդալներով: ՀՀ Նախագահի 2010 թ. մրցանակաբաշխության հումանիտար գիտությունների դափնեկիրն է:

Այս տարի հայագետ-նախիջևանագետ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Արգամ Այվազյանը ևս երկու գիրք է հրատարակել, որոնք թեն փոքրածավալ են, բայց հեղինակի գնահատմամբ՝ կարևոր: Աշխատանքներից մեկը «Քրոսահիսայ հախճապակեգործության մի կարևոր հավաքածո»-ն նվիրված է Կոմիտասին:

Այս աշխատության մեջ քննարկվում է Քրոսահիսայի հախճապակեգործության արվեստը, նրա դրվագները և Հունաստանում Գալֆայանների մասնավոր հավաքածուում գտնվող նյութերը: Աշխատության մեջ հրատարակված են նաև 120 գունավոր լուսանկարներ:

Երկրորդ աշխատանքը՝ «Աժդանական կամ Վիշապասար» լեռանը նվիրված գրական էսսե է: Նախիջևանում գտնվող Վիշապասարի վրա 1989 թվականին հայտնաբերվել է Անդրկովկասում առայժմ ամենահին ուրարտական սեպագիրք, որը թվագրվում է Ք. ա. 820-ական թվականներով: Էսսեն համարված է լեռան և շրջակա բնակավայրերի հայկական հուշարձանների 100-ից ավելի լուսանկարներով: Այս առիթով կայացած հարցազրույցը գրքերի հեղինակ Արգամ Այվազյանի հետ սիրով ներկայացնում ենք մեր ընթերցողին:

– Տարիների հեռվից գնահատելով Ձեր անցած ճանապարհը, ինչպե՞ս կներկայացնեք այսօրը, որտեղից ուր եք հասել:

– Այդ ճանապարհը սկսվում է դեռևս իմ դպրոցական տարիներից՝ 1961 թվականից, երբ 6-7-րդ դասարանից թղթակցում էի Բաքվի հայերեն «Կոմունիստ» թերթին, Ադրբեջանի ռադիոյի հայկական ռադիոհաղորդումներին: Հետաքրքրություններս դպրոցական տարիներում ակնհայտորեն դեպի ժուռնալիստիկան էր: 1964 թ. դպրոցն ավարտելուց հետո, ինձանից անկախ, 1965 թվականից սկսեցի զբաղվել նախիջևանյան հարցերով: Տարիների ընթացքում այդ շրջանակն ընդլայնվեց և ընդգրկեց ողջ նախիջևանյան հայագիտական գրեթե բոլոր բնագավառները՝ պատմություն, արվեստ, մշակույթ, ճարտարապետություն, ազգագրություն, լեզվաբանություն, քանդակ և այլն: Անցած տասնամյակներում, անշուշտ, Ադրբեջանի և Նախիջևանի իշխանությունների կողմից ենթարկվել եմ նաև մի շարք պատժամիջոցների ու արգելքների: Մակայն, հավանաբար, Աստծո օգնությամբ, այդ ամենը ի դերևս է եղել ու հաղթահարվել:

Մի հանգամանք էլ նշեմ, որ անցած ճանապարհին ինձ՝ բազմաթիվ խոչընդոտների հաղթահարմամբ, հաջողվել է փաստագրել նախիջևանյան հայկական մեզ հասած գրեթե ողջ նյութական ժառանգությունը: Այդ ուղղությամբ հաջողվել է նաև հրատարակել 200-ից ավելի աշխատություններ, որոնցից 40-ը առանձին գրքերով: Կատարվածը, առանց վարանելու, հսկայական աշխատանք է, որը հայագիտությունն առհասարակ հարստացրել է բազմազարդ նորահայտ նյութերով: Եթե այս հարցի պատասխանն այսպիսի համառությամբ ավարտեմ, ապա պետք է նշեմ, որ, ըստ հայ և օտար գիտական, պետական, քաղաքական բազմաթիվ գործիչների բազմիցս նշած գնահատականների՝ իմ հրատարակությունների շնորհիվ հայագիտության մեջ սկզբնավորվել է նախիջևանագիտություն և այդ առումով Նախիջևանը, որի համար էլ այն այսօր որոշ բացառություններով, գիտության մեջ լավ հետազոտված տարածք է:

– Ինչի՞ վրա է բևեռացված մեր հասարակությունը, ի՞նչ որակ է ձևավորում արվեստը:

– Ուետք է ընդգծեմ որ, ցավոք, վերջին տասնամյակներում մեր հասարակության ուշադրությունը մեծամասամբ բևեռված է նյութապաշտությանը: Մնացածը՝ որպես ածանցյալ, ի ցավ սրտի, ծառայում է հենց այդ նյութապաշտությանը: Ազգայինը, պետականության ամրապնդման ազնվաբարոյությունն աստիճանաբար նահանջ են ապրում: Ինչ վերաբերվում է արվեստի ձևավորմանը և նրա առաջնակարգային դերին, ապա այն ևս ձևավորվում է երկրորդական և օտար հոսանքների ազդեցությամբ: Մենք դեռևս հեռու ենք մեր ազգային արվեստն ու մշակույթը հնարավորինս անաղարտությամբ ձևավորելու ժամանակակից իրականության մեջ: Տաղանդավոր

ու առաջնակարգային արվեստ անշուշտ կա, սակայն, իմ կարծիքով, դրանք դեռևս կամ անտեսված են կամ էլ այնքան բանի տեղ չեն դրվում:

Ցավոք, այսօրվա Հայաստանի Հանրապետությունում առկա է մի քանի Հայաստան հասկացություն: Դա օլիգարխական դասի Հայաստանն է, որտեղ մի քանի տարում կարելի է ոչ միայն ազահաբար հարստանալ, այլ գերհարստանալ: Երկրորդ Հայաստանն աղքատ դասի Հայաստանն է, որի ներկայացուցիչները մի կերպ՝ կիսատված կամ սոված մթնեցնում-լուսացնում են իրենց օրն ու գիշերը: Երրորդ Հայաստանն իրական հայրենասերների ու նվիրյալների Հայաստանն է, որի ներկայացուցիչներն անընդհատ պայքարում են երկրում արդարություն հաստատելու, արժանապատիվ պետության ամրապնդման համար: Չորրորդ Հայաստանն արտագաղթողների ու զբոսաշրջիկներ դարձած հայաստանաբնիկների Հայաստանն է: Եվ այս շարքը, ցավոք, կարելի է շարունակել:

– Ի՞նչն է Ձեզ առավել անհանգստացնում մեր երկրում:

– Շատ բան: Մակայն ամենանազվախար մտահոգությունս այն է, որ մեր երկրում իր արժեքն ու գինը կորցրել է խոսքը, օրենքների չգործելու հանգամանքները: Առավել ևս անհանգստացնող է հավատի կորուստը: Այնպես որ նշածներս ցանկացած մարդու և պետության համար հիմնասյուներ են, որոնք, ցավոք, մեր օրերում խարխվել են:

– Դուք էլ, շատ շնորհաշատ մտավորականների նման անցաք մուտք ու ցուրտ տարիների միջով, ի՞նչ կարծիքի եք այն ժամանակների ու ներկայիս գրականության մասին:

– Մեր ժողովուրդն, անշուշտ 1988-95թթ. շատ բանի դիմացավ և շատ ու շատ դժվարություններ հաղթահարեց: Կարծում եմ, որ այդ տարիներին ժողովուրդը շատ լավ գիտակցում էր մեզ բաժին ընկած ճակատագրական փորձությունները՝ երկրաշարժի, սոցիալիստական կացութաձևի փոփոխման ու Արցախի պարտադրված պատերազմի դժվարությունները: Այդ տարիներին ժողովուրդը բարձր գիտակցությամբ տոկաց և արժանապատվորեն դիմացավ ու դիմադրեց:

Իմ կարծիքով ինչպես այդ դժվարին տարիներին, այնպես էլ մեր օրերում հայ գրականությունը դեռևս չի տվել մեծածավալ՝ այն ժամանակների շունչն ու ոգին պատկերող ու վերհանող ստեղծագործություններ: Այդ ուղղությամբ վերջին տարիներին հրատարակված որոշ գրական ստեղծագործություններ, իմ կարծիքով, դեռևս չեն լրացնում այդ բացը:

– Արդյո՞ք գրքերը նոր էլ կբացեն մեր նորագույն պատմության մեջ՝ ծառայելով որպես ձեռնարկ պատմաբանների և հասարակության համար:

– Ըստ կարգի, այո: Գրքերը լինեն գրական

280

ստեղծագործություններ, թե գիտա-պատմական աշխատություններ, պետք է որ ժամանակի ընթացքում դառնան ուսումնագիտական ձեռնարկներ: Սակայն մեր իրականության մեջ այդ պրոցեսները շատ դանդաղ են զարգանում և գրականության ու գիտության նվաճումները կամ տեղ չեն գտնում կամ էլ շատ ուշացումներով են արժանանում պետական ու ազգային գնահատականների: Այսօր, ցավոք, մեր պետական ոչ ճիշտ քաղաքականության պատճառով հայ մարդը պարզապես կտրված է գիր ու գրականությունից, մամուլից: Անտեղյակ է նոր լույս տեսած գրքերից: Բավական է ընդգծել, որ այսօր Հայաստանում գրքերը լույս են տեսնում 300-500 տպաքանակներով, մամուլը՝ 1000-5000 օրինակներով: Ընդ որում՝ դրանք էլ գրեթե հիմնականում տարածվում են Երևանում: Բավական է փաստել այն հանգամանքը, որ վերջին 20 տարում Երևանում փակվեցին շուրջ 60 գրախանութներ: Այժմյան երևանյան գործող 10-12 գրախանութներն էլ իրենց տարածքներով ուղղակի գրքերի պահեստների տպավորություն են թողնում: Գյուղական վայրերում էլ փակվել են բազմաթիվ գրադարաններ: Մնացածներն էլ ավելի քան 20 տարի է ինչ չեն համարվում նոր լույս տեսած գրականությամբ: Սա, մեղմ ասած, պետական հանցագործություն է ապագայի և ապագա սերունդների հանդեպ:


- Ինչպիսի՞ն էք տեսնում մեր երկրի ապագան:

- Ցավոք, այն այնքան էլ վարդազույն չեմ տեսնում: Այնպես որ, եթե իշխանությունները չիրագործեն ազգային և արմատական ծրագրեր, ապա առաջիկա տարիներին արտագաղթը ևս կշարունակվի ու երկրի բնակչության թիվը կնվազի մինչև 1,5 միլիոնի: Եվ երկիրը կիսազարգացած վիճակով հիմնականում կվերածվի սպասարկող, ծառայություններ մատուցող երկրի: Հայ մարդը, առավել ևս տաղանդավոր և հանձարեղ մարդը իր ունակությունները մեծամասամբ, ի ցավ սրտի, կշարունակի ներդնել այլ երկրներում:

- Ինչպե՞ս են ծնվում Ձեր գրքերը. խորքում են նաև ներկայացրե՞ք Զյոթափայի հախճապակու և Նախիջևանի Վիշապասարի գրքերը:

- Նկատենք, որ յուրաքանչյուր ստեղծագործող, գիտնական յուրովի է ստեղծագործում: Իմ աշխատությունները՝ լինի դա հոդված թե գիրք, ծնվում են մեկեն, որին նախորդում է իմ մեջ եփվելու-թրծվելու պրոցեսը: Եվ դրանց «ծնունդը» սովորաբար տևել է մեկ շաբաթից մինչև 3 կամ 4 ամիս: Այդպես են ստեղծվել իմ գրեթե բոլոր աշխատությունները: Այդպես ստեղծվեցին նաև 2014 թ. տպագրված իմ «Աժդահական կամ Վիշապասար» էսսեն, ու «Քյոթափայի հախճապակեգործության մի կարևոր հավաքածու» գրքերը: Այդ աշխատանքներից առաջինում ներկայացված է Նախիջևանի տարածքի գրեթե կենտրոնական մասում հիստորիաների վեր խոյացող գեղեցկատես Նախիջևանյան Մասիսը՝ Վիշապասարը, որի կողմին 1989 թ. հայտնաբերվեց Ք. ա. 820-ական թվականներով թվագրվող ուրարտական կարևոր սեպագիր: Էսսե-

ում ներկայացված են նաև այդ լեռան հետ կապված ավանդությունները և պատմական անցուղարձեղը, հիշյալ սեպագիրը, որն, իմիջիայլոց, Անդրկովկասում հայտնաբերված սեպագրերի թվում ամենանագունն է: Երկրորդ աշխատանքում, որը նվիրված է մեծն Կոմիտասին, ով արմատներով սերում է Նախիջևանի նշանավոր Ցոնա ավանից, քննարկված են առհասարակ Քյոթափայի հայոց հախճապակեգործության արվեստը, նրա ուսումնասիրության պատմությունը, ինչպես և Հունաստանում գտնվող Գալֆայանների հավաքածուի մաս կազմող Քյոթափայի հախճապակյա շուրջ 100-ի հասնող հավաքածուի իրերը: Երկու աշխատանքներում էլ գունավոր տպագրությամբ հրատարակվել են 100-120 լուսանկարներ:



- Կրնո՞ւյալովե՞ն արդյոք հետազայում ձեր փաստա-վավերագրական աշխատությունները:

- Դա, բնականաբար, կախված է ժամանակից, հնարավորություններից, ֆինանսների առկայությունից: Ցանկությունս, իհարկե շատ մեծ է: Թե ինչն ինչպիսի ընթացք կունենա, այժմ դժվարանում եմ ասել: Անցյալ տասնամյակներում, օրինակ, իմ հոդվածները վերածվեցին այնպիսի գրքերի, ինչպիսին են Ագուլիսին, Ջուղային նվիրված Նախիջևանի վիմագրական ժառանգության 6 հատորյակի 1-ին և 2-րդ հատորները, քանդակագործության, որմնակարչության, ազգագրության, հուշարձանների և այլ բնագավառներին նվիրված հատորյակները: Այնպես որ ապավինենք Աստծուն և հաջողությանը:

- 2015 թվականի ապրիլի 24-ին լրանում է Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարեիցը: Այս առիթով ձեր խոսքը հայ ժողովրդին:

- Չեմ կարծում եմ, որ 2015 թ. ինչ որ կարևոր հեղաշրջում է լինելու Հայոց Մեծ Եղեռնի ճանաչման գործում: Ակնկալիքներս այդ ուղղությամբ շատ քիչ են: Չեմ բացառում, որ այդ տարում ևս որոշ պետություններ կձանձանեն ցեղասպանությունը, սակայն Թուրքիան կմնա անդրդվելի: Այնպես որ մեզ թե՛ պետականորեն և թե՛ համազգային

ջանքեր են պետք այդ ուղղությամբ թե՛ 2015 թ. և թե՛ դրանից հետո հետևողական աշխատանքներ կատարելու համար:

- Ի՞նչ հորդորով կրիմեից մեր ժամանակի երիտասարդությանը:

- Ապագան միշտ էլ երիտասարդությանն է: Այնպես որ ապագայի համար պայքարողների ու մտահոգվողների շարքերում միշտ էլ պետք է երիտասարդները լինեն: Գցանկանայի, որ մեր երիտասարդությունը չեն նվազեցնեն ժամանակի քաղաքական գանազան հոսանքներին, կեղծ հայրենասիրության կոչերին ու խաբուսիկ շարժումներին, ինչին այսօր, ցավոք, հաճախ ակնատես ենք լինում: Այս երկրի թե՛ տերը և թե՛ նրա ապագայի կերտողը հենց երիտասարդությունն է: Այնպես որ այս իրավունքներից ու պարտականություններից երիտասարդությունը երբեք չպետք է հրաժարվի կամ էլ կրավորական դիրքորոշում ունենա: Ցանկությունս և մտահոգությունս նաև այն է, որ նոր՝ 2015 թ. և հետագա տարիներին մենք ազգովին գիտակցենք այն պարզ ճշմարտությունը, որ մեր երկրի ու ժողովրդի, պետականության զարգացման ճակատագիրը նախևառաջ մեր ձեռքերում է և ամեն ինչ պետք է անել այն արժանավայել ամրապնդելու համար: Հաջողությունների բարենաղթանքներս բոլորին...

Գարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**«ԼՔՎԱԾ
ԳՈՒՅՔԻ»
ՅՈՒՐԱՅՈՒՄ**

Հայտնի է, որ օսմանյան կառավարությունը հայերի ցեղասպանությունն իրականացնելու համար կազմակերպել էր հատուկ նշանակության ջոկատներ, որոնք հայտնի էին «Թեշքիլաթը մահուտե» («Հատուկ կազմակերպություն») անունով: Դրանք զբաղված էին ոչ միայն հայերի տեղահանության ու խաղաղ բնակչության բնաջնջման գործով, այլև նրանց շարժական ու անշարժ գույքի բռնագրավմամբ: Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից հետո Թուրքիայում ստեղծվեցին 33 հանձնաժողովներ, որոնք լծվեցին «լքված գույքի» հաշվառման, գրանցման ու իրացման գործին: Այդ աշխատանքներն իրականացնում էին «Թեշքիլաթը մահուտե»-ի անդամներից բաղկացած հանձնաժողովները: 1922-ին Թուրքիայում ընդունվեց «Լքված գույքի մասին» առաջին օրենքը: Մինչև 1988 թ. թուրքական կառավարությունը հետևողականորեն իրականացրեց հայերի, հույների ու սառիներին անշարժ գույքի յուրացման քաղաքականություն:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ. ՄԱՍՈՆՆԵՐԻ, ՍԻՈՆԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԳԱՂՏՆԻ ԿԱՊԵՐԸ

2008-ի ապրիլի 24-ին Երևանում էին «Գրանդ Օրինթ» («Մեծ Արևելք») մասոնական օթյակի Ֆրանսիայի կենտրոնակայանի բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես նաև իրավաբանական հարցերով պատասխանատու, նախկինում «Մեծ Արևելք» ուխտի խորհրդական Գի Հակոբյանը: Նրանց հետ հարցազրույցից զարմանքով տեղեկացանք, որ մասոնները սիոնիզմի հետ որևէ կապ չունեն, և որ «Մեծ Արևելք» օթյակի անդամները քաղաքականությամբ չեն զբաղվում: Մի թե... Հայոց ցեղասպանությունն իրագործած բազմաթիվ երիտթուրքեր հենց նույն «Մեծ Արևելքի» անդամ էին:

Արևմտյան հայտնի հետազոտող, «Անգլիայի պատմություն» և բազմաթիվ այլ ուսումնասիրությունների հեղինակ Ջասպեր Ռիդլին իր «Ազատ որմնադիրները (ֆրիմասոնները). աշխարհի ամենահզոր գաղտնի կազմակերպության պատմություն» (Նյու Յորք, 2001) մեծածավալ աշխատության մեջ (էջ 216-218) հայտնում է Թալեաթի՝ Թուրքիայի «Մեծ Արևելք» օթյակի (երկրի գլխավոր օթյակի) Մեծ Վարպետը, այսինքն՝ ղեկավարը լինելու մասին, ինչը նշանակում է, որ նա 33-րդ աստիճանի մասոն է եղել: Թալեաթը նշված օթյակի Մեծ վարպետ է դարձել 1909 թ.: «Երիտթուրքերից շատերը մասոններ էին, բայց ոչ նրանց առաջադեմ հայացքները Թուրքիայի արդիականացման մասին, ոչ էլ մասոնական սկզբունքները չկանխեցին Հայաստանում ցեղասպանության ծրագրին նրանց աջակցությունը», – իր հիշյալ աշխատության մեջ գրել է Ջասպեր Ռիդլին:

Անդրադառնալով Թալեաթ բեյին, որը հետագայում ստացել է Մեծնեղ Թալեաթ փաշա անունը՝ նշենք, որ նա երկրի երիտթուրք գլխավոր ղեկավարներից է եղել, ունեցել է հրեական ու գնչուական ծագում: Հեռագրակապի՝ ամիսը 3 լիրա աշխատավարձով այս ծառայողը հետագայում դարձել է Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար, 1917–1918 թթ.: Մեծ վեզիր (վարչապետ): Հայոց մեծ եղենի հիմնական ծրագրողներից և իրականացնողներից այս մեկը հայտնի է նաև որպես Մալմիսիկի «Վերթիսա» օթյակի անդամ («Դեռնմեց հրեաները, նրանց ծագումը և դերը հայկական ցեղասպանության մեջ», «Զարթոնք» օրաթերթ, 16.04.1986 թ., թիվ 155):

Ի դեպ, պատմությունից հայտնի է, որ երիտթուրքերի, այսինքն՝ Բթթի հաղ վե Թերաքքը («Միություն և առաջադիմություն») կուսակցության (հայտնի է նաև որպես կոմիտե) անդամների գործածած «Ազատություն, հավասարություն և եղբայրություն» բառերը նաև ֆրանսիական մասոնության նշանախոսքերն են, որոնք Ֆրանսիական Մեծ հեղափոխության հաղթանակից հետո վերածվել են Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական նշանախոսքի: Դրանք այսօր էլ զարդարում են Ֆրանսիայի խորհրդանիշները:

Միյուրքահայ հայտնի հրապարակախոս, փաստաբան և հասարակական գործիչ Գասպար Տերտերյանն իր «Միոնիզմի և պանթուրքիզմի առնչությունները և անոնց սպառնալիքները Հայաստանի լինելու թեման» աշխատության (Բեյրութ, 1990 թ.) մեջ Հայոց ցեղասպանության ոճրագործների՝ երիտթուրքերի շարժման («Միություն և առաջադիմություն» կուսակցության) պարագլուխներ Էնվեր և Թալեաթ փաշաների, Ջավիդ բեյի և Ջեմալ փաշայի առնչությամբ նշել է, որ նրանցից առաջին երեքը հրեա-սիոնիստներ էին:

Մասնագետներին, մասամբ նաև լայն հանրությանը հայտնի է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար սըր Չ. Հարդինգին:

Մտամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպան սըր Դ. Լոուրըրի ուղարկած 29.05.1910 թ. նամակ-զեկուցագիրը (Մեծ Բրիտանիայի Ֆորեյն օֆիսի դիվան, Լոուրըրի թղթեր, թիվ F.0.800/193 A փաստաթուղթն առաջին անգամ լույս է տեսել Լոնդոնում հրատարակվող «Միջինարևելյան ուսումնասիրություններ» (Journal of Middle Eastern Studies) ամսագրի 1971 թ. թիվ 1-ում՝ իբրև հավելված նույն համարում հրապարակված է. Կեդուրիեի «Երիտթուրքերը, մասոնները և հրեաները» հոդվածը): Դրանում



նշված է, որ սալոնիկյան (երիտթուրքական) շարժման աղբյուրը հրեաներն են: Մեծ Բրիտանիայի արտգործնախարարին ուղարկած իր նամակ-զեկուցագրում սըր Դ. Լոուրըրը Թալեաթին և Ջավիդ բեյին ներկայացրել է որպես «Բթթի հաղ վե Թերաքքը» կոմիտեի գաղտնի ուժերի պաշտոնական ներկայացուցիչներ և «Ֆրանկմասոնության գագաթնակետերը Թուրքիայում»:

Պատմությունից հայտնի է, որ Ջավիդ բեյը երիտթուրքերի պարագլուխներից էր, գործուն մասնակցություն է ունեցել Հայոց մեծ եղենի ծրագրմանը և իրականացմանը, իսկ հետագայում հատկապես ֆինանսապես աջակցել Մուստաֆա Քեմալի շարժմանը: «Այն բանից հետո, երբ Թալեաթ բեյը ներքին գործերի նախարար դարձավ մոտ մեկ տարի առաջ, պատասխանատու պաշտոնների սկսեցին նշանակվել միայն մասոններ կամ կոմիտեի հետ կապված մարդիկ, իսկ, ամենից հաճախ, այս երկու որակները իրենց մեջ համատեղող դեմքեր, – գրել է Մտամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպանը, – այսպիսով մասոնական կոմիտեի ցանցը տարածվեց ողջ կայսրությունով»:

Վերջ նշված և այլ փաստերի հիման վրա սըր Դ. Լոուրըրը եզրակացրել է, որ «Թուրքիայի քողածածկված կառավարությունը «Մեծ Արևելքն» է՝ Մեծ Վարպետ Թալեաթ բեյի գլխավորությամբ»: Իր նամակ-զեկուցագրում դեսպանն ուշագրավ տեղեկություններ է հաղորդել նաև Մաիդ Հալիմի մասին՝ նշելով, որ նա ֆինանսապես աջակցել է «Միություն և առաջադիմություն» կոմիտեին և անձամբ մասնակցել նրա աշխատանքներին: Ս. Հալիմը 1913-1916 թթ. եղել է Օսմանյան կայսրության Մեծ վեզիրը (վարչապետը), Մեծ եղենը ծրագրողներից էր: Սըր Դ. Լոուրըրը նշում է նաև, որ «Երիտթուրքերը կապ հաստատեցին միայն օսմանցի և արտասահմանցի հրեաների հետ: Նրանց օտարումը մյուս ժողովուրդներից ակնհայտ դարձավ», իսկ քիչ հետո հավելում է. «Երևում է, որ հրեան, իր տնտեսական բարձր գիտակցությամբ, թուրքին ծուղակը գցեց»:

Նույն փաստաթղթում դեսպանը հայտնում է նաև իրեն հասած այն տեղեկությունը, թե Մալմիսիկի կոմիտեի ազդեցիկ գործիչներից մեկը՝ դոկտոր Նազրմը, հրեական ծագում ունի: Համեմատելիս, անժխտելի փաստ է, որ դոկտոր Նազրմը Մեծ եղենի հիմնական ծրագրողներից և իրագործողներից մեկն է եղել, ղեկավարել է այդ ահավոր ոճրագործությունն իրագործելու կոչված «Թեշքիլաթը մախսուսե» («Հատուկ կազմավորումներ») կառույցը:

Սկստի ունենալով երիտթուրքերին՝ բրիտանացի դիվանագետը գրել է. «Մայրաքաղաքն ու խորհրդարանը նրանք իրենց ձեռքում պահում են ռազմական օրենքով: Հայերին հանգստացրին Ադանայի կոտորածով, հույներին ստիպեցին լռել ահաբեկչության միջոցով, բուլղարական քաղաքական կյանքին վերջ դրեցին՝ նրանց ծառայություններն ու ընկերությունները փակելով: Այդ բոլորն արվեց «անսանձ» քրիստոնյաների դեմ: Հիմա թուրքական բանակը հանգստացնում է ըմբոստ ալբանացի մահմեդականներին, և, ըստ երևույթին, նույնը սպասում է նաև

300

քրդերին ու արաբներին: Քանի որ թուրք տարրը չի փայլում իմացական և գործարար որակներով, բնագործ նրանց ստիպում է ցույց տալ իրենց գերակայությունը ռազմական ուժով: Սակայն այս ամենը կախված է եվրոպացի, հիմնականում հրեա ֆինանսավորողներից, որոնք նրանց հատկացնում են բանակը պահելու համար անհրաժեշտ գումարները, ինչը դեմ է տնտեսական զարգացման փաստացի իրադրությանը»:

«Միոնիստների հետ երիտթուրքերի հակահայկական համագործակցության մասին գրում է Թեհրանի համալսարանի պատմության պրոֆեսոր Իսմայիլ Ռահիմը, - իր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատորյակի առաջին գրքում, (Եր., 1982) անդրադառնալով երիտթուրքերի և սիոնիստների կապերին (էջ 228-249), տեղեկացրել է հայ ակնավոր պատմաբան և քաղաքագետ Ջոն Կիրակոսյանը: - Հայերի կոտորածի մեղավորներ ճանաչելով երիտթուրքերին և գերմանացիներին, թուրքական նացիոնալիզմն ու պանթուրքիզմը՝ պարսիկ պատմաբանն ընթերցողի ուշադրությունն է հրավիրում օսմանյան կայսրության ազդեցիկ հրեա դեմքերի բացասական դերի վրա: Նա հիշատակում է մի ֆրանսիացու «Le Dernier bal» («Վերջին բալը») գրքի 1-36 և 46-86 էջերը, որտեղ փաստեր և ապացույցներ են արձանագրված միջազգային սիոնիզմի հակահայկական գործողությունների մասին: Մասնավորապես հիշատակվում է 1914-ի հունիսի 23-ին Ստամբուլի Նուբի Օսման ակումբում կայացած Իթթիհատ կուսակցության ակտիվիստների և սիոնիստների համատեղ գաղտնի ժողովը: Նրան մասնակցել էր մոտ 700 մարդ, այդ թվում՝ Թալեթը, Բադրին, Սեդը, Ֆեքրին, Խիսալին և ուրիշներ: Հրեաներից աչքի ընկնող դեր էին խաղացել Սամուել Էֆենդին, Աբրահամ Էֆենդին և ուրիշները»:

Գաղտնի ժողովում, որին մասնակցել են նաև մի շարք պանիսլամիստներ, հայերին մեղադրել են ռուսասիրության մեջ, որոշել բոլյևոս հայտարարել ինչպես հայերին, այնպես էլ հույներին: Ի դեպ, ժողովում գլխավոր ձառախուսը Թալեթին է եղել: Եղենից վերապրածների ժառանգներս գիտենք, թե Մասանյանի գավակների այդ բոլյևոս ինչպես իրականացվեց և ինչ նշանակեց:

«Մի քանի տարի առաջ սալոնիկցի հրեա մասն էմանուել Կարասոն, որը հիմա Օսմանյան մեջլիսում քաղաքի պատգամավորն է, Մալոնիկում հիմնեց իտալական ֆրանկմասոնության հետ կապված «Մակեդոնիա Ռիզորտա» օթյակը, - նշված է դեսպանի հիշյալ գեկուցագրում: - Միանգամայն ակնհայտ էր, որ այս մարդը աշխատանք էր տանում երիտթուրքերի ռազմական ու քաղաքական գործիչներին մասոնությանը հաղորդակից դարձնելու համար, որպեսզի Թուրքիայի նոր ղեկավարության շրջանում տարածվի Արևելքի հրեական գաղտնի գործունեության ազդեցությունը»:

Այնքան մեծ է եղել հրեա մասոնների դերն ու ազդեցությունը երիտթուրքական «Իթթիհատ վե թերաքքը» կազմակերպու-

թյան ծննդի ու գործունեության մեջ, որ Կ. Պոլսի բրիտանական դեսպանության գլխավոր թարգման Շ. Ֆիցցմոնիսը նրան անվանել է «Միություն և առաջադիմություն» հրեական կոմիտե» (Ֆորեյն Օֆիսի դիվան, Լոուլթրի թղթեր, փաստաթուղթ թիվ F.O.800/193 B): Սըր Դ. Լոուլթրն իր հիշյալ նամակ-գեկուցագրում հավաստում է, որ «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ղեկավարներից շատերը ֆրանկմասոն են: Նշել է նաև, որ Էմանուել Կարասոն մեծ դեր է ունեցել, մասնավորապես՝ հասել է նրան, որ իր ձեռքն է անցկացրել այդ կազմակերպության Բալկանյան կոմիտեն: «Տեղացի և արտասահմանցի հրեաներն սկսեցին նոր վարչակարգին արդյունավետ օգնություն ցույց տալ, - նկատի ունենալով երիտթուրքերի հեղափոխությունից և սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի տապալումից հետո ձևավորված վարչակարգը՝ գրել է Ստամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպանը: - Դա շարունակվեց այնքան ժամանակ, քանի դեռ, ինչպես մի թուրք բացատրեց, ժողովուրդը չսկսեց խոսել, թե ամեն մի հրեայի կարելի է գաղտնի կոմիտեի լրտես համարել, և թե ամբողջ շարժումը ոչ այնքան թուրքական, որքան հրեական հեղափոխություն էր: Բտալիայի կառավարությունը որպես գլխավոր հյուպատոս Մալոնիկ ուղարկեց հրեա մասոն Պրիմո Լևիին, որը մինչ այդ արտաքին ներկայացուցչության փորձ չուներ: Ամերիկայի դեսպան նշանակվեց Օսկար Շտրաուսը, որը Ջեյկըր Շիֆֆի հետ ամերիկացի հրեաների վրա մեծ ներգործություն ունեցավ հրեաների Միջազգային արտագաղթի հարցում: Դա սիոնականության զարգացած հոսանքներից էր, որը հանդես էր գալիս «ուրիշ հայրենիք» ծրագրի դեմ: 1909 թ. վերջերին, դեսպանի տեղեկացմամբ, «Մալոնիկի պատգամավոր, հաջողակ և խելոք դեռնմե հրեա ու մասոն Ջավիդ բեյը ֆինանսների նախարար նշանակվեց»: Դեռնմե են կոչվում արտաքուստ, ձևակառույց կրոնափոխ եղած (իսլամացած) այն բոլոր հրեաները, որոնք պատկանում են հրեա «մարգարե» Սեպթայի կրոնական ուղղությանը (սեպթայիզմ): Երիտթուրքերի հեղափոխությունից հետո երկրում 2 տարի ժամկետով ռազմական դրություն է հայտարարվել: Սըր Դ. Լոուլթրի հավաստմամբ, «Ռազմական դատարանի շատ սպաներ ֆրանկմասոն էին»: Ցանկացած թերթի տպագրությունն արգելվելու և խմբագրին կամ սեփականատիրոջը ռազմական դատարան կանչելու իրավասություն ունեցող մամուլի գրասենյակի ղեկավարի պաշտոնում, դարձյալ ըստ նույն նամակ-գեկուցագրի, «առաջ քաշվեց նա մեկ դեռնմե հրեա մասոն Մալոնիկից»: Հիշյալ փաստաթղթում սըր Դ. Լոուլթրը տեղեկացրել է նաև. «Կիսապաշտոնական օսմանյան հեռագրային ծառայությունը, որն արտահայտում էր Կոմիտեի կարծիքը օսմանների ներքին և արտաքին գործերի վերաբերյալ, գործողության մեջ դրվեց բաղդադի մի հրեայի ղեկավարությամբ: Միևնույն ժամանակ, ոստիկանության հին նախարարության փոխարեն ստեղծվեց Հասարակական

անվանագության կազմակերպությունը՝ սալոնիկցի մի հրեայի ղեկավարությամբ, որը միաժամանակ հսկում էր թե ոստիկանությունը և թե ժանդարմերիային»: Առանձնապես կարևոր է Մեծ Բրիտանիայի դեսպանի հաղորդած այն տեղեկությունը նաև, որ բանակում «Իթթիհատ վե թերաքքը» կոմիտեի ազդեցությունը տարածելու համար սպաներին ընդունում էին մասոնության մեջ՝ նրանց «Ռենգե» օթյակի անդամ դարձնելով:

«Կոմիտեի՝ պատգամավորների և ծերակուտականների մեծամասնությունը մասոն է դարձել և ընդունվել «Մահմանադրություն» («Լա Կոնստիտուսիոն» կամ «Կանոնի Բասայի») օթյակի մեջ, - իր հիշյալ գեկուցագրում գրել է դեսպանը: - Նրանցից առաջիններից էին ներքին գործերի նախարար Թալեթ բեյը և ֆինանսների նախարար Ջավիդ բեյը: Ընդդիմության պատգամավորներից մի քանիսը, հատկապես արաբները, տեսնելով, որ մի կողմ են ժամու քաղաքական գաղտնիքներից և վարչական ղեկից, նույնպես սկսեցին միանալ օթյակներին կամ նորերը ստեղծել, ինչպես, օրինակ, «Օսմանյան եղբայրություն» («Ուխուվվետի օսմանիե») և «Ազատության բարեկամներ» («Մուհիբանի հյուրրիեթ»): Վերոհիշյալ օթյակներից նրպես լրացում՝ 1909 - 1910 թթ. ստեղծվեցին հետևյալ օթյակները. «Արևելքի հավատարմություն», «Անկեղծ բարեկամներ», «Միություն և առաջադիմություն», «Բիզանցիո Ռիզորտա», «Լա Վերիտե» (ֆրանսերեն՝ ճշմարտություն.- Ա. Ն.), «Լա Մատրի» (ֆրանսերեն՝ հայրենիք.- Ա. Ն.), «Լա Ռընեսանս» (ֆրանսերեն՝ վերածնունդ.- Ա. Ն.) և Եգիպտոսի ընդհատակյա քաղաքական հետաքննիչների համար բավական հայտնի «Լուսաբաբը», որը «Մակեդոնիա Ռիզորտայի» մի բաժին է: Այս ամբողջ մասոնական ցանցը, սալոնիկյանի և մակեդոնականի նման, հրեաների ձեռքում է, որոնք կա մ անմիջականորեն են ղեկավարում բոլոր օթյակները, կա մ ուղղորդում են դրանց գործունեությունը»:

Արթուր ԳՈՎԱՆԼԻՍԱՆ

Երիտ

Հունարենը մեղմ է, հռոմեական լեզուն՝ հզոր, հոնարենը՝ ահաբեկող, ասորերենը՝ աղերսական, պարսկերենը՝ պերճ, պաներենը՝ գեղեցկագաղթ, գոթերենը՝ հեզնական, եգիպտերենը՝ տափակախոս ու խավարածայն, հնդկերենը՝ ճովողական, հայերենը՝ քաղցր, որը միաժամանակ կարող է մյուս բոլոր լեզուների հատկություններն ամփոփել իր մեջ:

Երիտ

Հայոց լեզու, դու մեր անկողոպտելու գանձը եղար, մեր անընկճելի հայրենիքը: Մեր ժողովուրդը կորցրեց գահ և թագ, գորք և իշխանություն, ավեր եղան և ավար մեր բերդերն ու քաղաքները, ավար եղան մեր ինչքն ու գույքը, բայց դու մասցիր միայն կանգուն, մասցիր հաղթական: Ցնցոտի հագավ մեր ժողովուրդը, բայց դու ծիրանով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջաղջախեց նրա սրունքը, դու թներ տվիր նրան՝ ժողովրդին:

Միքայել ՆԱԼԱՆ ԴՅԱՆ

24 апреля – День памяти жертв Геноцида в Армении



В 1915 году Османская Турция начала массовые уничтожения армян, которые продолжались несколько лет. Геноцид армян был организован турецкими правителями при поддержке императорской Германии и при попустительстве западных стран.

Исповедуя идеи регрессивного пантюркизма и панисламизма, турецкие власти стремились не только сохранить Османскую империю и насильно уничтожить или ассимилировать подданное население, но и создать всетуранскую империю, в которую бы вошли все мусульмане.

В 1894-1896 годах в Турции было организовано уничтожение более чем 300 тысяч армян. В 1909 году в Адане и его окрестностях было убито 30 тысяч армян.

24 апреля 1915 года была арестована первая группа армянской интеллигенции. Далее последовали многочисленные аресты. За короткий период число арестованных достигло около 800 человек, в числе которых были писатели, ученые, искусствоведы, педагоги, актеры, врачи, священники, общественные деятели, а также армянские депутаты турецкого меджлиса (парламента). Всех их погнали в Анатолию и зверски убили.

В результате Геноцида 1915 года было уничтожено около полутора миллионов армян, со своих земель было депортировано все армянское население Западной Армении.

24 апреля стал днем памяти невинных жертв и каждый год отмечается и в Армении, и в диаспоре.

В 1965 году на холме Цицернакаберд началось строительство мемориала памяти невинных жертв. Комплекс был закончен в 1967 году и стал священным местом армян.

44-метровая стела символизирует возрождение армянского народа. 12 плит, символизирующих собой 12 потерянных провинций, входящих в настоящее время в состав Турции, образуют конус, в центре которого на глубине полутора метров горит вечный огонь. Рядом со стелой находится стометровая стена с названиями городов и деревень, в которых происходила резня.

В 1995 году в другом конце парка был открыт Музей геноцида (архитекторы Калашян и Мкртчян), посвященный этим ужасным событиям. В музее представлены некоторые снимки, сделанные германскими фотоаппаратами (в том числе Армином Вегнером), а также их публикации. Недалеко от музея находится аллея, где иностранные государственные деятели сажают деревья в память о жертвах геноцида.

Каждый год 24 апреля, в День памяти жертв Геноцида армян, сотни тысяч людей поднимаются на холм к мемориальному комплексу и возлагают цветы (обычно гвоздики и тюльпаны) к вечному огню. Благодаря усилиям армянских диаспор по всему миру построено множество памятников жертвам Геноцида.



Одной из причин Геноцида армян в Османской империи стала сюрреалистическая ревность турок. Статья Huffington Post.

Влиятельное американское издание The Huffington Post обратилось к теме 100-й годовщины Геноцида армян в Османской империи 1915 г. В статье с красноречивым заголовком «100 лет одиночества. Геноцид армян и этнические чистки. 2015» представлены подробности преступления, имевшего место век назад, события, предшествовавшие этому факту, и последовавшее развитие.

«Минул почти век с трагического дня 24 апреля 1915 г., когда поздней ночью были арестованы представители армянской интеллигенции Османской империи и приговорены к смерти в концентрационных лагерях Алаша и Чанкара. Этому событию предшествовали продолжавшиеся порядка 20 лет этнические чистки и погромы армянского населения, включая убийство 300 тысяч армян по приказу султана Абдула Гаида в 1896 г. и погромы 30 тысяч армян в Адане 1909 г.», – пишет издание.

Автор статьи отмечает, что за последующее десятилетие на территории всего Армянского нагорья и других территориях Османской империи этническим союзникам подверглись 1,5 млн. армян, а также 1,5 млн. ассирийцев и греков. Подчеркивается, что это было «практически все христианское население империи».

«Христиан задерживали и запирали в церквях, заживо сжигали, бросали в пещеры, которые заливались ртутью, и просто сжигали в обычных газовых кабинках. Турки при содействии и по подстрекательству своего союзника в лице немецкого кайзера захватили имущество христиан, их банковские счета, насиловали и брали в рабство женщин и детей, тысячи были под угрозой смерти обращены в ислам. Большинство армянского населения было депортировано в концентрационные лагеря в Сирии, немногим удалось выжить при прохождении тысяч километров пути в пустыне», – говорится в статье.

Издание отмечает, что «в условиях продолжающейся уже век официальной политики отрицания Турции армяне остались в одиночестве и преисполнены горечью». Однако, пишет автор, исповедующие христианство армяне по всему миру сумели создать свои общины и процветали сперва в составе Советского Союза, а теперь и в независимой Армении.

«Одной из причин Геноцида армян стало смешанное на этнической и финансовой почве сюрреалистическое чувство ревности к этому народу. Например, армянская элита управляла производством хлеба и казенными средствами, направляемыми на разные отрасли промышленности империи. Кроме того, армяне были самой образованной прослойкой населения империи. Турки, потерявшие практически всю западную часть империи в войнах против независимости сербов и греков, воспользовались возможностью, которую им предоставила Первая мировая война, когда у Запада были иные проблемы, и предприняли широкомасштабный джихад против «неверных» и немусульманских меньшинств», – написало издание The Huffington Post.

Американское издание The New Yorker опубликовало статью о Геноциде армян и политике отрицания Турции

Авторитетное американское издание The New Yorker в последнем номере опубликовало обширный материал на тему Геноцида армян в Османской империи 1915 г. и официальной политике Турции по данному вопросу.

В статье Раффи Хачадуряна под красноречивым заголовком «Век молчания: спасаясь от Геноцида семья и пройденный ею долгий путь» на примере истории жизни деда автора, который родился в Диарбекире (Западная Армения, ныне территория Турции), рассказывается о Геноциде армян в Османской империи, насильственной исламизации армянского населения, туркизации фамилий.

«Диарбекир стал израненным многонациональным городом, в котором численность христианского населения существенно снизилась», – отметил автор статьи.

Он подчеркивает, что уже целый век Турция отрицает факт Геноцида армян и даже наказывает тех, кто смеет озвучивать эту тему. Однако, по словам автора статьи, в настоящее время многие диарбекирские курды начали осознать свою вину за участие в Геноциде и озвучивать эту тему.

Хачадурян говорит также о проблеме восстановления армянской церкви Сурб Киракос в Диарбекире и позиции городских властей.

«Хотя с момента осуществления Геноцида прошло столетие, многие подробности остаются неизвестными. Повсеместно применяемая государственная политика отрицания препятствует доступу к официальным архивам – как очевидным, так и скрытым образом», – говорится в статье.

Источник: Panorama

НАРОДУ АРМЕНИИ

Никто не ожидал беды,
Ничто не предвещало бури,
Кто-то над землёй меч поднял,
Древний народ огню предал.

Снова наступила весна,
Нет кузнеца, нет пахаря,
О мой Господь, что за пора?
Нет молодоженов у алтаря.

Земля пропитана кровью,
Душам убиенных покоя нет,
Неужто предали забвению
Через много горьких лет?

Скучают наши поля,
Ласка пахаря нужна.
Ты их сеял, расчищал,
Из камня хлеб выжинал.

В огне правду искал
Справедливости ради.
Подвиги совершал,
К тебе тянулись люди.

Мир покоряли все мечом
От Китайской стены,
Ты это делал дудуком,
Эхо достигало Гизы.

Ты, народ, труд любящий,
Носишь крест свой тяжёлый.
И раны твои не заживут,
Пока палача не настиг Божий суд!

**Самвел МАНАСЯН,
Джавакх, с. Дилиска.**

230 «Եվրատեսիլ-2015» երգի մրցույթում

Ռինոյի հեն՝ ձայնագրել է բազմաթիվ երգեր, «Japan records awards 2007» մրցանակաբաշխությունում ճանաչվել է «Տարվա հայտնություն»: Նույն տարում թողարկել է երկու ձայնասկավառակ: Նրա երգերը բազմիցս հնչել են անիմացիոն և գեղարվեստական ֆիլմերում: Այժմ ապրում է Տոկիոյում: Հայոց ցեղասպանության մասին շատ պատմություններ է լսել տատիկից՝ Գոհար Միքայելյան-Թոփայանից, ում նախնիները գաղթել են Լիբանան, ապա՝ ԱՄՆ:

Ավստրալիան կներկայացնի Աթենա Մանուկյանը, հունահայ արմատներով այս երգչուհին վերջերս հաստատվել է Միդլեյտոն, որտեղ թողարկել է իր վերջին տեսահոլովակը: 2008-ին մասնակցել է «Մանկական եվրատեսիլի» Հունաստանի նախընտրական փուլին, թեև հաղթող չի ճանաչվել: Այսօր 19-ամյա այս երգչուհու տեսահոլովակների «YouTube»-յան դիտումների քանակը միլիոնի է հասնում: Իր արմատների մասին էլ վերջին հարցազրույցներից մեկում ասել է. «Ցավոք, դեռ չեմ եղել Հայաստանում, սակայն հորս շնորհիվ ճանաչել ու սիրել եմ հայրենիքս: Նաև հայեցի դաստիարակություն եմ ստացել: Իսկ վերջում առաջիկա անելիքների մասին խոսելիս շեշտել է. «Մտադիր եմ ընդունել Հայաստանից ստացած հրավերը»...

Դե, իսկ հայաստանյան մասնակցին, որը, ըստ Հանրայինի խորհրդանշական սցենարի, պետք է համախմբի անմոռուկի թերթիկների հեն զուգակցվող վերոնշյալ հինգ երգիչներին, կարծում ենք, ներկայացնելու կարիք չկա: Ինձա Արշակյանին բոլորս ենք ճանաչում և սիրում՝ նրա հզոր ձայնի և կատարողական տաղանդի համար...



«Եվրատեսիլ». «Genealogy»-ի հրաշալի վեցնյակը

Առաջին անգամ Հայաստանը մասնակցել է «Եվրատեսիլին» 2006-ին *Without Your Love* երգով՝ Անդրեի կատարմամբ: Երգը դուրս եկավ եզրափակիչ, գրավելով 8-րդ տեղը, և դրանով իսկ ազդարարեց ՀՀ-ի հաջող մեկնարկը: 2012-ին մեր երկիրը չմասնակցեց *Բարվում* կայացած մրցույթին:

Հայաստանը 2013-ին մրցույթում ներկայացրեց *Dorians* խումբը, որը գրադեցրեց 18-րդ տեղը: «Lonely Planet» երգի հեղինակն էր Թոնի Այոմին *Black Sabbath*-ից:

2014-ի մասնակից Արամ MP3-ին գրադեցրեց 4-րդ տեղը 174 միավորով: «Եվրատեսիլ» երգի մրցույթը անց է կացվում ամեն տարի, 1956 թվականից սկսած:

Մրցույթին մասնակցում են Եվրոպական հեռարձակողների միության մեկական ներկայացուցիչ այն երկրներից, որոնք մասնակցության հայտ են ներկայացնում: Փառատոնն անցնում է ուղիղ եթերով: Յուրաքանչյուր երկրից կարող է մասնակցել մեկ ներկայացուցիչ, երգը չպետք է գերազանցի 3 րոպեն: Ելույթից հետո հաղթող երգը որոշվում է հեռուստադիտողի ու ժուրիի քվեարկության միջոցով:

«Եվրատեսիլ-2015» երգի միջազգային մրցույթը կանցկացվի Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում մայիսի 19-23-ը: Մրցույթին մասնակցում է 40 երկիր:

Կարեն ՄՂՂՍՅԱԼ

Դու հին ես՝ այո, բայց ոչ հնացած,
 Դու քարի երկիր ու ոչ քարացած,
 Մեր խելառ կամքն է լեռներիդ տեսքով այդպես քարացել,
 Ալեհեր լեռդ այդ մեր վշտից է միջուկից ճեղքվել:
 Ջրերդ կարկաչ մեր արցունքներն են հատ-հատ գումարված,
 Երկինքդ կապույտ այդ մեր հավաստի անհունն է անտակ,
 Դաշտերդ կանաչ մեր երազների հորիզոններն են,
 Ձորերդ խորունկ բարությամբ լցված հոգուդ ճեղքերն են,
 Քո ծաղիկները քո հերոսների քարավաններն են,
 Երկաթ գրերդ մեր օջախների անխախտ սյուներն են...
 Դու հին ես՝ այո, բայց ոչ հնացած,
 Դու քարի երկիր, բայց ոչ քարացած,
 Մեր արևատես, մեր արևահամ,
 Մեր հանձարածին երկիր Նաիրյան:

Պետք չեն խոսքերն այսօր, անիմաստ են ու գուր,
 Քանզի սերս արդեն հոգեվարք է ապրում,
 Ապրած իմ օրերից՝ ես հոգնած ու տխուր,
 Ես քո խոստումներից էլ չեմ գերվում:
 Այսօրվանից սերս ես փոխում եմ կյանքի,
 Դու՛ ինձ ներիր, ներիր հազար անգամ,
 Ու՛ մ է երազը պետք առանց անրջանքի,
 Իմ անկունն եմ ուզում վերադառնալ:
 Ներիր, եթե ցավ եմ քեզ պատճառել,
 Մերք միշտ լինում է «ինչու»ներով,
 Ես մի վերջին անգամ ուզում եմ «Մեր» ասել,
 Քեզ մի վերջին անգամ, վերջին ներշնչումով:
 Պետք չեն խոսքերն այսօր, արցունքներդ սրբիր,
 Եվ թող լռությունը լինի միակ վկան,
 Ես քեզ համար թերի ճակատագիր,
 Մի կարճ երազ, խեղդված քո ապագան:

Ի՞նչ բախտ է սա,
 Խարխափելով անվերջ քայլել այս մութի մեջ,
 Չափսփելով ճանապարհը շարունակվող անվերջության:
 Ի՞նչ ապագա,
 Երբ ծախում ենք մեր ունեցած սրբությունը,
 Այն էլ ձրի և թվում ենք մենք մեզ բարձր ու անթերի:
 Բայց հավատա՛ ,
 Վհատվելու հնար՝ չկա: Այս օրերն էլ վերջ կունենան...
 ...Գիտե՛ս մեզ պես քանի մարդ է եկել-անցել
 Առեղծվածի այս մութ ճամփան:

Քո մագերին իր արծաթն է դրել ծերությունը,
 Ծովացել են ու ալիքվել հոգուդ կարոտները,
 Ափսոսանքի ծանրությունն է իջել սրտիդ վրա,
 Քո աչքերի գույգ կաթիլը՝ սառը ցողն է նրա:

Չեմ հասկացել ես քեզ հաճախ, երեխա եմ եղել,
 Չարմանում եմ, տարակուսում՝ ո՞նց ես ինձ դիմացել,
 Ես հաճախ խենթ, չարածձի, դու միշտ ներողամիտ,
 Հազար անգամ ներողություն, ներիր մեղավորիս:

Հիմա նստած՝ մեղանչումիս երգն եմ տխուր մանում,
 Փաթիլվում են իմ հուշերը, երազներս ձգվում,
 Հասկանում եմ թերևս ես միայն հիմա, հանկարծ,
 Որ իմ Եսը մեծացել է Քո մեծ սրտին հենված:

Դպրոցի ազգությունը կախված չէ աշակերտների և վարժապետների լոկ հայությունից. լեզուն է, որ միայն կարող է այդ վերնագիրը դնել դպրոցի ճակատին... Թող ուրե՛մն հայ մանուկը նախ և առաջ որպես հայի զավակ ուսանի յուր սեփական լեզուն և ապա օտարինը: Ազգի հոգին և ազգի սիրտը կարող են յուրյանց հատկությունը և որակությունը մաքուր պահել միայն կերպարանագործվելով ազգային լեզվի ազդեցության տակ. այս ճշմարտությունը ուրացողը ուրացող է ազգության:

Հայ լեզուն է այն սարսափելի ուժը, որի ընդդեմ տկար են նաև միլիոնավոր բարբարոսների սվինները: Լեզուն է ազգությանց դրոշակը, լեզուն է նոցա որալիսության և վիճակի հայտարարը:

Միջայել ՆԱԼԱՆԴՅԱԼ

«Горцарар»

Издается с июля 1999г.

Автор проекта и учредитель –
Ваграм БЕКЧЯН

Зам. гл. редактора -
Роза ГУЛЯН

Գլխ. խմբագրի տեղակալ՝
Ռոզա ՂՈՒԼՅԱԼ

ИЗДАТЕЛЬ

Издательский Дом

«ШАГАНЭ»

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован
в Министерстве Российской Федерации
по делам печати, телерадиовещания
и средств массовых коммуникаций
Регистрационный номер
ПИ № 77-5015

Авторские материалы
не рецензируются и не возвращаются.
Переписку с читателями редакция
не ведет. Мнение авторов может
не совпадать с мнением редакции.
Материалы со знаком **Ч** публикуются
на правах рекламы.
Редакция не несет ответственности
за содержание рекламных объявлений.

ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов» г. Калуга, ул. Московская 256.
Формат А3, объём 4,0 п.л.
Тираж 1 500 экз. Зак. № 274.

Территория распространения:
Российская Федерация, страны СНГ,
зарубежные страны.

В номере использованы материалы
«НОВЕ КОВЧЕ», **«АЗГ»**, **«АРАВОТ»**,
«ГА», **«ЕТЕР»**, **«ՎԱԿԱԿԱՆ ՋԱՄԱՆԱԿ»**,
«ՎՐԱՅՈՒՆԿ», **«ՎՕՅՆԻ»**, **«НОВОЕ ВРЕМЯ»**.

Цена свободная.

Адрес издательства и редакции:

**248001, г. Калуга,
ул. Суворова, 160.**

Тел.: (4842) 56-59-29, 59-17-73.

E-Mail: gortsarar@list.ru

факс (4842) 565-929,

www.gortsarar.ru



E-Mail: gortsarar@list.ru